


# Դատական իշխանության անկախության ապահովում ֆինանսավորման միջոցով



Երևան, 2022թ.

Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Դատական իշխանության անկախության ապահովումը դատաիրավական բարեփոխումների համատեքստում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է Բաց հասարակության հիմնադրամներ- Հայաստանի ֆինանսավորմամբ:

Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետներն ու եզրահանգումները պատկանում են ուսումնասիրության և զեկույցի հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կազմակերպության տեսակետների հետ:

Հեղինակ՝ Աննա Մելիքյան

Խմբագիր՝ Արաքս Մելքոնյան

ԱՄՓՈՓՈՒՄ.....	4
I. Դատական համակարգի ֆինանսավորումը որպես անկախության երաշխիք. Միջազգային չափանիշներ, օրենսդրությունը և պրակտիկան Հայաստանում .....	9
1.1 Առանձին, բավարար, պատշաճ բյուջե. միջազգային սկզբունքներ.....	10
1.1.1 Դատական համակարգի առանձին բյուջեի ապահովումը Հայաստանում .....	12
1.1.2 Դատական համակարգին բավարար ռեսուրսների հատկացումը ՀՀ-ում .....	14
1.1.3 Շենքային պայմանների բարելավում .....	24
1.2 Դատավորների վարձատրության երաշխիքներ. միջազգային սկզբունքներ.....	27
1.2.1. Դատավորների վարձատրությունը ՀՀ-ում .....	28
II. Մասնակցությունը բյուջեի կազմման, քննարկման և տնօրինման գործընթացներին .....	39
2.1. Մասնակցությունը բյուջեի կազմման, քննարկման և տնօրինման գործընթացներին. միջազգային սկզբունքներ.....	39
2.2 Բյուջեի պատրաստման մոդելներ .....	40
2.3 Մասնակցությունը բյուջեի պատրաստման, քննարկման և տնօրինման գործընթացներին ՀՀ-ում.....	45
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	54
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	57

## ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հետազոտությունը իրականացվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի» աջակցությամբ: Հետազոտության նպատակն է գնահատել, թե արդյոք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և պրակտիկայում ապահովվում են դատական համակարգի անկախության երաշխիքները պատշաճ ֆինանսավորման միջոցով:

Դատական համակարգի անկախության երաշխիքներից է պատշաճ ֆինանսավորումը, ինչը յուրաքանչյուր պետության պարտավորությունն է: Դատարանները կարող են լինել իրապես անկախ, եթե ունեն առանձին բյուջե, իսկ տրամադրվող ռեսուրսները բավարար են, որպեսզի նրանք ի գործու լինեն իրականացնելու իրենց գործառնությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված չափանիշներին համապատասխան: Բավարար ռեսուրսները պետք է ներառեն դատական համակարգի անկախության, արժանապատվության և արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ միջոցներ, դատական և վարչական աշխատակազմ, ինչպես նաև ընթացիկ ծախսերի համար բյուջե: Դատական իշխանությունը, որպես կանոն, ի դեմս դատական խորհրդի պետք է ներգրավված լինի համակարգին տրամադրվող բյուջեի որոշման բոլոր փուլերում, ինչպես նաև տնօրինի այն:

ՀՀ օրենսդրությունն ընդհանուր առմամբ ամրագրում է դատական համակարգի անկախության ապահովման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքներ, ներառյալ առանձին բյուջե ունենալը և դրա պատրաստման հարցում դատական համակարգի դերը, այդ թվում՝ բյուջեի տնօրինման իրավունքը:

ՀՀ օրենսդրությամբ դատարաններին և Բարձրագույն դատական խորհրդին դատական իշխանության բյուջեի նախագծի ձևավորման ողջ գործընթացում էական դերակատարում է վերապահված և նախատեսված մեխանիզմը համապատասխանում է միջազգային չափանիշներին: Ավելին, դատական իշխանության բյուջեն ոչ միայն կազմվում և ներկայացվում է Կառավարությանը դատարանների ու Բարձրագույն դատական խորհրդի բյուջետային հայտերի հիման վրա, այլև Բարձրագույն դատական խորհրդն իրավասու է ներկայացնելու իր դիրքորոշումը և անհրաժեշտ ծախսերի հիմնավորվածությունն ու Ազգային Ժողովում տարեկան պետական բյուջեի քննարկման շրջանակներում: Ըստ այդմ, ապահովվում է դատական իշխանության ինքնակառավարման մարմնի ու խորհրդարանի միջև ուղիղ քննարկումների հնարավորությունը: Այնուամենայնիվ, ներկայացվող Ազգային Ժողովի կողմից հաստատվող բյուջեի համեմատական վերլուծությունը, մասնավորապես՝ կրճատումները, փաստում են, որ դատական համակարգն իրական ազդեցություն չունի բյուջեի չափի վերջնական որոշման վրա, և Ազգային Ժողովը հիմք է ընդունում գործադիր իշխանության դիրքորոշումը:

Բացի այդ, բյուջեի հայտի կազմման համար նախատեսված ժամկետները բավականին սուղ են: Դատական համակարգի բյուջեի դեպքում իրավիճակը բարդանում է նաև ներգրավված սուբյեկտների առանձնահատկություններով, այդ թվում՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից որոշումների ընդունման մեխանիզմը հաշվի առնելով:

Դատական համակարգին տրամադրվող բյուջեն բավարար չէ բացահայտված կարիքները հոգալու համար: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայումս դատական համակարգին տրամադրվող միջոցները հնարավորություն են տալիս պարզապես բավարարելու նվազագույն պահանջները, և հրատապ կարիքներ հոգալու համար անհրաժեշտ միջոցներ չեն տրամադրվում անգամ այն դեպքում, երբ առկա է դատական համակարգի կողմից հստակ հիմնավորված անհրաժեշտություն: Դատական համակարգի տրամադրվող բյուջեի 80%-ից ավելին կազմում են վարձատրության համար ծախսերը:

2019 և 2020թթ. հայտերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դատական իշխանության կողմից ներկայացված 2020թ. հայտում ոչ միայն վարձատրության, այլ գրեթե բոլոր տողերով առկա էր պահանջի ավելացում, ինչն արտացոլում էր դատական համակարգի կողմից բացահայտված կարիքները: Կառավարության առարկության համատեքստում Ազգային ժողովում քննարկման արդյունքում վերջինիս կողմից դատական համակարգին, սակայն, տրամադրվեց պահանջված գումարի 59.7%-ը: Ներկայացված հայտից կրճատվել են դատավորների վարձատրության բարձրացման համար նախատեսված միջոցները, ինչպես նաև շենքային պայմանների բարելավման համար հայցվող գումարը: Ավելին, միջնաժամկետ եռամսյակային հայտում չի հաստատվել որևէ կապիտալ ծախս, այն դեպքում, երբ որոշ դատարանների շենքեր ապահովված չեն նույնիսկ նվազագույն անհրաժեշտ պայմաններով՝ դատական նիստերի դահլիճներով, բաց և փակ գոտիներ ստեղծելու հնարավորությամբ և այլն:

2021թ.-ին Հայաստանի դատական համակարգին տրամադրված բյուջեն կազմում էր պետական բյուջեի ծախսերի մոտ 0.66%-ը: 2015-2020թթ. տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև բացարձակ թվերի առումով դատական համակարգին հատկացված բյուջեն որոշ չափով ավելացել է, սակայն պետական բյուջեի՝ դատական համակարգին հատկացվող մասնաբաժինը նվազման կայուն միտում է գրանցում՝ 0.81%-ից մինչև 0.66%՝ 2021թ.-ին: 2021թ. առաջին անգամ վերջին տարիների ընթացքում արձանագրվել է դատական համակարգին տրամադրվող բյուջեի ոչ թե ավելացում, այլ կրճատում, չնայած արձանագրված կարիքների՝ 2020թ. համեմատ այն կրճատվել է 497 023.1 հազար դրամով: Նվազել է նաև մեկ շնչի հաշվարկով դատական համակարգին տրամադրվող գումարը՝ շարունակելով վերջին տարիների միտումը: Այս միտումն ավելի անհանգստացնող է դատարանների ծանրաբեռնվածության զգալի աճի համատեքստում. ավելացել է չավարտված գործերի թիվը և գործերի ավարտելու համար անհրաժեշտ ժամանակը՝ պայմանավորված դատական գործերի թվի աճով և դատավորների անփոփոխ թվով:

Չնայած դատական գործերի թվի ավելացմանը՝ դատական համակարգին տրամադրվող բյուջեի շրջանակներում հնարավորություն չի ընձեռնվում ավելացնելու դատավորների թիվը, երբ դրա կարիքը բացահայտվել է դատական համակարգի կողմից: Դատական համակարգը ներկայացնում է դատավորների թիվն ավելացնելու առաջարկ, սակայն Կառավարությունը համաձայնություն չի տալիս: Մյուս կողմից, արձանագրվել են դեպքեր, երբ բյուջետային հայտը պատրաստելուց հետո դատական համակարգը ստիպված էր վերանայել այն՝ Կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների համատեքստում վերջին պահին առաջ քաշվող փոփոխությունների անհրաժեշտության արդյունքում՝ Կառավարության կողմից նախաձեռնված դատավորների թվի ավելացման պատճառով, բայց ոչ այն մասնագիտացմամբ, որ հայցել է դատական համակարգը, ինչը վկայում է իշխանության ճյուղերի համագործակցության և համակարգման պակասի մասին:

Բյուջեի նախապատրաստման փուլում չեն ապահովվում պատշաճ խորհրդակցություններ դատական և գործադիր իշխանությունների միջև, բանավոր համաձայնությունների հիման վրա մշակվող բյուջետային հայտ, որի իրականացման համար անհրաժեշտ իրավական հիմքը ժամանակին չի ապահովվում Կառավարության կողմից, անգամ այն պարագայում, երբ նման գործողություններ նախատեսված են ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությամբ և դրանից բխող 2019-2020 թվականների գործողությունների ծրագրով: Ավելին, բյուջեի հայտը, տարաձայնության դեպքում, փաստացի հաստատվում է Կառավարության, այլ ոչ թե դատական իշխանության կարծիքի հիման վրա: Գործադիր իշխանության փաստացի ազդեցությունը դատական համակարգի ռեալ ֆինանսավորման հնարավորությունների վրա, Ազգային ժողովում իշխող քաղաքական ուժի մեծամասնության պայմաններում, որը թույլ է տալիս հաստատել այն բյուջեն, որին կողմ է գործադիրը՝ առանց դատական համակարգի կարծիքն ըստ էության հաշվի առնելու, ստեղծում է դատական իշխանության ֆինանսական անկախությունը խաթարելու իրական լծակ: Բյուջետավորման գործընթացում չի ապահովվում իրական և արդյունավետ մասնակցություն բյուջեի պլանավորման և հաստատման գործընթացում, ինչպես նաև նշված բնագավառում գործնականում՝ իշխանության ճյուղերի տարանջատումը և դատական համակարգի իրական անկախության երաշխավորումը:

Ինչ վերաբերում է դատավորների վարձատրության չափին միջին աշխատավարձի համատեքստում, ապա հարկ է նշել, որ թեև ֆորմալ առումով դատավորների աշխատավարձն ավելի բարձր է երկրում միջին աշխատավարձի չափի համեմատ, քան Եվրոպայի խորհրդի երկրներում միջինացված արդյունքը, գործնականում չի ապահովվում դատավորի պաշտոնին հարկը, պատասխանատվության աստիճանին համապատասխան վարձատրություն: CEPEJ-ն դատավորների վարձատրության պատշաճությունը գնահատում է երկու ցուցանիշի հիման վրա. դատավորի՝ կարիերայի սկզբում աշխատավարձը (սկզբնական աշխատավարձ) և բարձրագույն դատական աստիճանի դատավորի միջին աշխատավարձը՝ երկրի միջին

աշխատավարձի համեմատ: Այս մոտեցմամբ, բացարձակ թվերը հաշվի առնելով, Հայաստանի դատավորները վարձատրվում են լավագույնս, քանի որ կարիերայի սկզբում դատավորը ստանում է միջին աշխատավարձի քառապատիկը, իսկ կարիերայի վերջում՝ վեցապատիկը: Նշենք, որ, օրինակ, Բելգիայի, Գերմանիայի, Իսլանդիայի, Լատվիայի, Նիդերլանդների, Շվեդիայի, Սլովենիայի դատավորները կարիերայի սկզբում ստանում են միջին աշխատավարձի երկպատիկից էլ պակաս, ինչը ամենացածրն է ԵՄ անդամ երկրներում: 2019թ.-ին ՀՀ-ում միջին աշխատավարձը կազմել է 182,673 ՀՀ դրամ, առաջին ատյանի դատավորի մեկ ամսվա միջին աշխատավարձը, ներառյալ աշխատանքային ստաժով պայմանավորված հավելավճարը, 808,810 ՀՀ դրամ էր, այսինքն՝ միջին աշխատավարձից 4.4 անգամ ավել, իսկ Վճռաբեկ դատարանի դատավորների միջին աշխատավարձը, որը ներառում է աշխատանքային ստաժի համար վճարվող հավելավճարը՝ 1 201 845.6 ՀՀ դրամ, այսինքն՝ միջին աշխատավարձից 6.6 անգամ ավել:

Դատավորի վարձատրության երաշխիքները և մեխանիզմն ամրագրված են օրենքով և ֆորմալ առումով համապատասխանում են միջազգային չափանիշներին և մոտեցումներին՝ դատավորի կարիերայի սկզբում և վերջում ստացվող վարձատրության և երկրում միջին աշխատավարձի համեմատության առումով: Գործնականում, սակայն, դատավորի փաստացի վարձատրության չափը զգալիորեն տարբերվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով վարձատրության նույն գործակից ունեցող գործադիր իշխանության ներկայացուցչի փաստացի վարձատրությունից, քանի որ վերջին տարիներին գործադիր իշխանության ներկայացուցիչների վարձատրության բարձրացման համար կիրառվում են ֆիքսված պարգևատրումների կանոնավոր վճարումներ, որոնք միտված են ապահովել նշված պաշտոնատար անձանց ամսական վարձատրությունը՝ անկախ կատարողականից և պարգևատրման որպես բուն գործիքի նպատակներից: Արդյունքում, առաջին ատյանի դատավորին հավասար գործակից ունեցող նախարարի առաջին տեղակալը 2019թ. դրությամբ ամսական ստանում էր 1 մլն ՀՀ դրամ ամսական աշխատավարձ ու պարգևավճար, իսկ նույնքան աշխատանքային փորձ և նույն գործակից ունեցող առաջին ատյանի դատարանի դատավորը 2019թ. ստանում էր 779 644 ՀՀ դրամ, ներառյալ՝ պաշտոնային դրույքաչափը և աշխատանքային ստաժի համար հավելավճարը:

Նման մոտեցումը, երբ աշխատանքի վարձատրությանը պայմանավորված է ոչ թե օրենքով սահմանված չափով, այլ պարգևատրումների չափով և քանակով, հանգեցնում է կամայականությունների, բացասական տարբերակմանը, դատավորների հանդեպ անբարենպաստ պայմանների ստեղծման և դատավորների պաշտոնին, լիազորություններին և պատասխանատվությանը ոչ համարժեք վարձատրության:

ՀՀ-ում դեռևս առկա են դատարանների կամ դրանց նստավայրերի վարչական շենքերի համար ոչ բավարար տարածք ունենալու կամ այլ պետական մարմինների նստավայրերից պատշաճ կերպով սահմանազատված չլինելու, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար

մատչելի չլինելու խնդիրները: Կառավարությունը փաստում է, որ որոշ դատարանների շենքեր նաև ապահովված չեն նվազագույն անհրաժեշտ պայմաններով՝ դատական նիստերի դահլիճներով, բաց և փակ գոտիներ ստեղծելու հնարավորությամբ և այլն, սակայն անհրաժեշտ միջոցներ չեն տրամադրվում, բյուջեի հայտում նշված ծախսերը չեն հաստատվում: Արդյունքում, դատական համակարգի կողմից տրամադրվող ծառայությունը մատչելի, հասանելի և որակով չէ, իսկ արդարադատության մատուցման պայմանները՝ ոչ արժանապատիվ:

Դատական համակարգի աշխատանքի հանդեպ վստահության բարձրացման, արդարադատության իրականացման արդյունավետ և որակով, պատշաճ պայմաններում ապահովման համար անհրաժեշտ է գործնականում երաշխավորել դատական համակարգի անկախության համար անհրաժեշտ ֆինանսավորումը, որի հիմքում կլինեն հենց դատական համակարգի կողմից բացահայտված և առաջնահերթ գնահատված կարիքները:



# I. Դատական համակարգի ֆինանսավորումը որպես անկախության երաշխիք. Միջազգային չափանիշներ, օրենսդրությունը և պրակտիկան Հայաստանում

Դատական իշխանության անկախությունը և հաշվետողականությունը գնահատելիս հաշվի են առնվում ոչ միայն անկախության իրավական հիմքը և կազմակերպչական ինքնավարությունը, այլև ֆինանսավորումն ու դատական համակարգի կառավարումը: Միջազգային հեղինակավոր կառույցները համակարծիք են, որ դատական համակարգի անկախության անկյունաքարերից է պատշաճ ֆինանսավորումը, ինչը յուրաքանչյուր պետության պարտավորությունն է<sup>1</sup>:

Թեև դատարանների բյուջեն պետական բյուջեի մաս է, որն ի դեմս ֆինանսների նախարարության խորհրդարանին է ներկայացվում գործադիր իշխանության կողմից, դատարանների ֆինանսավորումը չպետք է պայմանավորված լինի քաղաքական տատանումներով<sup>2</sup>: Այն պետք է կրի կայուն բնույթ՝ հիմնված օբյեկտիվ և թափանցիկ չափանիշների<sup>3</sup>, այլ ոչ թե որևէ պետական մարմնի հայեցողության վրա: Ավելին, դատարաններին ֆինանսների հատկացման որոշումները պետք է ընդունվեն դատական իշխանության անկախության սկզբունքի խստագույն պահպանմամբ<sup>4</sup>, հատկապես ծախսերի նվազեցման անհրաժեշտության դեպքում:

Դատական իշխանության ֆինանսավորման մասին խոսելիս կարևոր է հաշվի առնել հետևյալ հիմնական դրույթները.

- ա) անկախության սկզբունքի երաշխավորումը՝ դատական իշխանության անմիջական ներգրավմամբ բյուջեի կազմման բոլոր փուլերին (հայտի պատրաստումից մինչև խորհրդարանի հետ քննարկում և հաստատված բյուջեի բաշխում),

<sup>1</sup> Տե՛ս Դատական մարմինների անկախության հիմնարար ս կ գ բ ու ն ք ն եր ը, ընդունվել են Հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի յոթերորդ կոնգրեսի կողմից, Միլան, 1985 թ., օգոստոսի 26 - սեպտեմբերի 6, հավանության է արժանացել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985 թվականի նոյեմբերի 29-ի 40/32 և 1985 թվականի դեկտեմբերի 13-ի 40/146 բանաձևերով, պարբ.7, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18504>; Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ (ԵԴԽԽ), Կարծիք թիվ 2 (2001) ներկայացվում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի ուշադրությանը

Դատարանների ֆինանսավորման և կառավարման մասին՝ հաշվի առնելով դատական համակարգի արդյունավետությունը և մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, պարբ. 4, հասանելի է <https://rm.coe.int/ccje-opinion-no2-armenian-2-2001-/16808e6443>; Report On the independence of the judicial system, Part I: the independence of judges, adopted by the Venice Commission at its 82nd Plenary Session (Venice, 12-13 March 2010), para. 53, available at

<https://rm.coe.int/1680700a63#:~:text=The%20bodies%20of%20the%20legislative,120%20of%20the%20Constitution%201.&text=No%20question%20shall%20be%20asked,concerning%20a%20case%20under%20trial>

<sup>2</sup> ԵԴԽԽ, Կարծիք թիվ 2 (2001), պարբ.5

<sup>3</sup> Funding of the Judiciary, European Network of Councils for the Judiciary (ENCJ) Report 2015-2016, adopted by the General Assembly 3rd June 2016, p.3, available at

[https://www.ency.eu/images/stories/pdf/workinggroups/encj\\_2015\\_2016\\_report\\_funding\\_judiciary\\_adopted\\_ga.pdf](https://www.ency.eu/images/stories/pdf/workinggroups/encj_2015_2016_report_funding_judiciary_adopted_ga.pdf)

<sup>4</sup> ԵԴԽԽ, Կարծիք թիվ 2 (2001), պարբ. 5

բ) հաստատված բյուջեի համապատասխանությունը (առանձին, բավարար և պատշաճ լինելը, դատավորների վարձատրության երաշխիքները) դատական իշխանության կարիքներին, որպեսզի վերջինս կարողանա իրականացնել իր գործառույթները:

### 1.1 Առանձին, բավարար, պատշաճ բյուջե, միջազգային սկզբունքները

Դատական համակարգի պատշաճ ֆինանսավորման կարևորության հարցին բազմիցս անդրադարձել է Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԽՄ):

ԵԴԽՄ թիվ 10 կարծիքով ընդգծվել է, որ դատարանները կարող են լինել իրապես անկախ, եթե ունեն **առանձին** բյուջե<sup>5</sup>:

ԵԴԽՄ-ն հատկապես կարևորել է դատարաններին **բավարար** ռեսուրսների տրամադրումը, որպեսզի վերջիններս ի գործու լինեն իրականացնելու իրենց գործառույթը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 6-րդ հոդվածով սահմանված չափանիշներին համապատասխան<sup>6</sup>: Բավարար ռեսուրսները պետք է ներառեն դատական համակարգի անկախության, արժանապատվության և արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ միջոցներ, դատական և վարչական աշխատակազմ, ինչպես նաև ընթացիկ ծախսերի համար բյուջե<sup>7</sup>:

Դատական խորհուրդը պետք է վերահսկի իրեն տրամադրված ֆինանսները և իրականացնի գործունեությունն իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերից անկախ, ինչպես նաև ունենա բավարար ֆինանսական ու վարչական ռեսուրսներ իր գործառույթները պատշաճ կատարելու համար<sup>8</sup>:

Ֆինանսավորման համակարգը բարելավվելու նպատակով ԵԴԽՄ-ն հորդորել է ուշադրություն դարձնել հետևյալ գործոններին,

ա) դատական համակարգի ֆինանսավորումը պետք է արտացոլի դրա կարիքները՝ դատական գործերը կառավարելու համար,

բ) արդյունքների հիման վրա կատարվող ֆինանսավորման համար անհրաժեշտ է գնահատել արդյունքները և ծախսված ժամանակը: Միննույն ժամանակ ծանրաբեռնվածությունը գնահատելու նման համակարգերը պետք է լինեն պարզ, և արդյունքը պետք է օգտագործվեն

<sup>5</sup> ԵԴԽՄ, Կարծիք թիվ 10 (2007) ներկայացվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի ուշադրությանը Հասարակությանը ծառայող բարձրագույն դատական խորհրդի մասին, ընդունվել է ԵԴԽՄ-ի կողմից իր 8-րդ նիստի ընթացքում (Ստրասբուրգ, 2007 թվականի նոյեմբերի 21-23), պարբ. 74, հասանելի է <https://rm.coe.int/no10-in-armenian-10-2007-/16808e64ea>

<sup>6</sup> ԵԴԽՄ, Կարծիք թիվ 2(2001), պարբ. 14

<sup>7</sup> Funding of the Judiciary, ENCJ Report 2015-2016, p.12

<sup>8</sup> Summary of international and ENCJ sources, Annex I to the ENCJ Report 2015-2016, p.5, available at [https://www.ency.eu/images/stories/pdf/GA/Warsaw/encj\\_report\\_funding\\_annex\\_i\\_international\\_sources.pdf](https://www.ency.eu/images/stories/pdf/GA/Warsaw/encj_report_funding_annex_i_international_sources.pdf)

պատշաճ զգուշությամբ՝ ապահովելով դատական անկախությունը: Օրինակ, ծանրաբեռնվածությունը գնահատող նորմերը չպետք է կիրառվեն մեխանիկորեն առանձին գործերի համատեքստում:

գ) իշխանության ճյուղերի տարանջատումն ապահովելու ու ամրապնդելու նպատակով դատական համակարգը պետք է սերտորեն ներգրավված լինի բյուջետավորման բոլոր փուլերում և պետք է պատասխանատու լինի դատարանների ֆինանսական կառավարման գործընթացի համար ինչպես առանձին հարցերում, այդպես էլ ընդհանուր առմամբ՝ տրամադրված բյուջեի շրջանակներում<sup>9</sup>:

Միջոցների առավել արդյունավետ օգտագործելու պահանջը չպետք է լինի դատավորի՝ գործով որոշում կայացնելու կարողությունը կաշկանդող գործոն<sup>10</sup>:

Վենետիկի հանձնաժողովը դատական համակարգի անկախության մասին զեկույցում նույնպես ընդգծել է դատական իշխանության պատշաճ ֆինանսավորման անհրաժեշտությունը, որի դեպքում հնարավոր կլինի ապահովել դատարանների և դատավորների կողմից ՄԻԵԿ 6-րդ հոդվածով սահմանված չափանիշների պահպանումը, իրենց պարտավորությունների ամբողջական և արդյունավետ իրականացումը<sup>11</sup>:

Դատական համակարգի պատշաճ ֆինանսավորումը ներառում է նաև դատավորների բավարար քանակի և որակավորված դատական աշխատակազմի առկայության ապահովում<sup>12</sup>:

Պատշաճ ֆինանսավորումը երաշխավորելու համար Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Դատավորների և փաստաբանների անկախության համար պատասխանատու հատուկ զեկույցողը հորդորել է պետություններին դատական համակարգին հատկացնել համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) որոշակի ֆիքսված մասը<sup>13</sup> կամ պետական բյուջեի առնվազն 2-6 տոկոսը<sup>14</sup>:

---

<sup>9</sup>Summary of international and ENCJ sources, Annex I to the ENCJ Report 2015-2016, p.14

<sup>10</sup>Recommendation CM/Rec (2010)12 of the Committee of Ministers to member states on judges: independence, efficiency and responsibilities, adopted on 17 November 2010 (Recommendation CM/Rec (2010)12), para. 34

<sup>11</sup>Report On the independence of the judicial system, Part I: the independence of judges, adopted by the Venice Commission, para. 52

<sup>12</sup> Recommendation CM/Rec (2010)12, paras. 34-35, available at <https://rm.coe.int/cmrec-2010-12-on-independence-efficiency-responsibilites-of-judges/16809f007d>

<sup>13</sup>Report of the Special Rapporteur on the independence of judges and lawyers, Leandro Despouy Addendum Mission to Maldives, A/HRC/4/25/Add.2, 2 May 2007, para. 77, available at <https://undocs.org/A/HRC/4/25/Add.2>

<sup>14</sup> Report of the Special Rapporteur on the independence of judges and lawyers, Leandro Despouy Addendum Mission to the Democratic Republic of the Congo, A/HRC/8/4/Add.2, 11 April 2008, para. 76 (a), available at <https://undocs.org/A/HRC/8/4/Add.2>

Տրամադրված բյուջեի բավարար լինելը գնահատելիս դիտարկվում է, թե արդյոք բյուջեն թույլ է տալիս հոգալ էական գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսերը, մասնավորապես հետևյալ ոլորտներում.

ա) դատարանների ծանրաբեռնվածության կառավարում/գործերի վարում,

բ) փորձագետների, թարգմանիչների ներգրավման համար անհրաժեշտ ծախսեր (եթե այդ ծախսերը հոգում է դատարանը),

գ) դատավորների և աշխատակազմի պատրաստվածություն,

դ) տեխնիկական հագեցվածություն, շենքային պայմաններ<sup>15</sup>:

### 1.1.1 Դատական համակարգի առանձին բյուջեի ապահովումը Հայաստանում

Դատական համակարգին առանձին, բավարար և պատշաճ բյուջեի տրամադրումը կարևոր է ապահովելու ՄԻԵԿ 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների պահպանումը:

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենսդրությունն ընդհանուր առմամբ ամրագրում է առանձին բյուջեի ապահովման առումով դատական անկախության երաշխավորման համար անհրաժեշտ երաշխիքներ: Այնուամենայնիվ, նորմերի և իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը՝ 2020թ. բյուջետային հայտի և հատկացված ֆինանսավորման հիման վրա թույլ է տալիս վերհանել մի շարք բացեր:

2018թ.-ից ՀՀ-ում կիրառվում է բյուջետավորման ծրագրային մոդելը<sup>16</sup>, որը ՀՀ դատական դեպարտամենտի կողմից գնահատվում է որպես արդյունավետ մեթոդ<sup>17</sup>: Դատական համակարգի բյուջեն ՀՀ պետական բյուջեի մաս է, և թեև տրամադրվում է առանձին ծրագրի շրջանակներում, կազմվում է ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքի<sup>18</sup>, համապատասխան տարվա համար ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի և այլ վերաբերելի իրավական ակտերով նախատեսված կանոնների ու սկզբունքների համաձայն:

2020թ. Հայաստանի պետական բյուջեով արդարադատության իրականացման ոլորտում նախատեսված էր մեկ ծրագիր՝ «Դատական իշխանության գործունեության ապահովում և

<sup>15</sup>Summary of international and ENCJ sources, Annex I to the ENCJ Report 2015-2016, pp. 10-11

<sup>16</sup>Մինչ 2018թ. ՀՀ բյուջեի, այդ թվում դատական համակարգին տրամադրվող բյուջեի պատրաստման համար կիրառվում էր այլ ձևաչափ: Նշենք, որ մինչև 2018թ. ՀՀ պետական բյուջեում արդարադատության համակարգի միջոցներն առանձին տողով ներառում էին նաև իրավական պաշտպանությունը, <https://www.gov.am/files/docs/2575.pdf>

<sup>17</sup> Հարցազրույց Դատական դեպարտամենտի Նյութատեխնիկական ապահովման վարչության պետի և աշխատակցի հետ, 2021թ. փետրվարի 11

<sup>18</sup> ՀՀ բյուջետային համակարգի մասին ՀՕ-137 օրենք, ընդունված է Ազգային ժողովի կողմից 1997թ. հունիսի 24 , ՀՀՊՏ 1997.08.11/18, հասանելի է <https://www.arlis.am/documentview.aspx?docid=75497>

*իրականացում»* վերստառությամբ<sup>19</sup>: Որպես ծրագրի նպատակ նշված է *դատական իշխանության անկախության երաշխավորում, բնականոն գործունեության և դատական պաշտպանության իրավունքի ապահովում*, որի վերջնական արդյունքը պետք է լինի *Դատական իշխանության գործունեության և դատական պաշտպանության իրավունքի ապահովման արդյունավետության բարձրացում*: Ծրագրով նախատեսված 18 միջոցառումները փաստացի յուրաքանչյուր դատարանին, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդին (ԲԴԽ) տրվող բյուջեներն են: Թեև յուրաքանչյուր միջոցառում իր հերթին ներառում է միջոցառման նկարագրություն, բյուջեն չի պարունակում ցուցիչներ, որոնք թույլ կտան որակապես գնահատել արդյունքները և ծրագրի իրականացման արդյունավետությունը, այսինքն՝ հնարավոր չէ պարզել, թե որքանով է հաջողվել հասնել ծրագրի նպատակին և թե որն է համեմատության (գնահատման) համար անհրաժեշտ ելքային ցուցանիշը: Լրիվ նույն մոտեցումը և ձևակերպումներն են կիրառվել 2021 թ. ՀՀ պետական բյուջեի մասին օրենքում<sup>20</sup>:

Բյուջեի կարգադրիչը ԲԴԽ-ն է, ինչը նշանակում է, որ բյուջեի տնօրինման իրավունքը վերապահված է դատական համակարգին:

Ըստ Դատական դեպարտամենտի ներկայացուցիչների՝ ծրագրային բյուջետավորման անցնելուց հետո 2019թ. առաջացել էին խնդիրներ՝ կապված դատական համակարգին տրամադրված բյուջեի լիարժեք տնօրինման հետ: Ցանկացած փոփոխություն, վերաբաշխում պետք է կատարվեր Կառավարության որոշմամբ, ամբողջ գործընթացը տևում էր առնվազն մեկուկես ամիս, ինչը թույլ չէր տալիս ձկուն արձագանքել առաջացող կարիքներին և արդյունավետորեն տնօրինել բյուջեն:<sup>21</sup> Մոտեցումը վերանայվեց, և 2020թ. կարգադրիչներին հնարավորություն ընձեռնվեց կատարել միջծրագրային վերաբաշխումներ իրենց հայեցողությամբ՝ պարզապես ծանուցելով ՀՀ ֆինանսների նախարարությանը: Նման մոտեցումը թույլ է տալիս ապահովել առանձին բյուջե ունենալու և աայն տնօրինելու համար անհրաժեշտ երաշխիքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ առանձին բյուջե ապահովելու առումով ՀՀ օրենսդրությունը համապատասխանում է միջազգային չափանիշներին: Այնուամենայնիվ, բյուջեի բավարար լինելու առումով առկա են խնդիրներ, այդ թվում՝ նաև այն պատճառով, որ հենց դատական համակարգի կողմից բացահայտված կարիքները հիմնականում պատշաճ արձագանք չեն ստանում:

<sup>19</sup> ՀՀ 2020թ. պետական բյուջեի մասին օրենք, ընդունված է 2019թ. դեկտեմբերի 6-ին, էջ 48-53, հասանելի է <https://www.gov.am/files/docs/3929.pdf>

<sup>20</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155710>

<sup>21</sup> Դատական դեպարտամենտի ներկայացուցիչների հետ հարցազրույց

### 1.1.2 Դատական համակարգին բավարար ռեսուրսների հատկացումը ՀՀ-ում

Ինչպես արդեն նշվել է, բավարար ռեսուրսները պետք է ներառեն դատական համակարգի անկախության, արժանապատվության և արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ շենքային պայմաններ, դատական ու վարչական աշխատակազմ, ինչպես նաև ընթացիկ ծախսերի համար բյուջե:

Դատական իշխանության անկախությունը բյուջետավորման համատեքստում քննարկելիս անհրաժեշտ է գնահատել մի քանի գործոն.

- արդյո՞ք տրամադրվող բյուջեն համապատասխանում է առկա կարիքներին (ի՞նչ բաղադրիչներից է կազմված), այդ թվում՝ բավարար աշխատակազմի, պատշաճ շենքային և տեխնիկական ապահովման առումով,
- արդյո՞ք դատավորների վարձատրությունը սահմանված է օրենքով, համապատասխանում է դատավորների դերին և դրա հիմքում օբյեկտիվ ու թափանցիկ չափորոշիչներ են,
- արդյո՞ք ապահովվում է դատավորների բավարար քանակ և որակավորված դատական աշխատակազմի առկայություն:

2021թ.-ին Հայաստանի դատական համակարգին տրամադրված բյուջեն կազմում էր պետական բյուջեի ծախսերի մոտ 0.66%-ը, որը զգալիորեն ցածր է վերը նշված ՄԱԿ-ի զեկուցողի կողմից խորհուրդ տրվող չափից: Պետք է ընդգծել, որ 2021թ. առաջին անգամ վերջին տարիների ընթացքում արձանագրվել է դատական համակարգին տրամադրվող բյուջեի ոչ թե ավելացում, այլ կրճատում, չնայած արձանագրված կարիքների՝ 2020թ. համեմատ այն կրճատվել է 497 023.1 հազար դրամով: Նվազել է նաև մեկ շնչի հաշվարկով դատական համակարգին տրամադրվող գումարը՝ շարունակելով վերջին տարիների միտումը: Ավելին, 2015-2021թթ. տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև բացարձակ թվերի առումով դատական համակարգին հատկացված բյուջեն որոշ չափով ավելացել է, սակայն պետական բյուջեի՝ դատական համակարգին հատկացվող մասնաբաժինը նվազման կայուն միտում է գրանցում՝ իջնելով 0.81%-ից մինչև 0.66% (տե՛ս *Աղյուսակ 1*):

**Աղյուսակ 1. ՀՀ պետական բյուջեի ծախսային մասը և դատական համակարգի բյուջեն 2015-2021թթ. (հազար դրամ)**

Տարեթիվ	Պետական բյուջեն ծախսային մասով (հազար դրամ)	Դատական իշխանության բյուջեն (հազար դրամ)	Դատական բյուջեի բաժնեմասը պետական բյուջեի ծախսային մասում %	ՀՀ բնակչությունը նշված տարվա հունվարի 1-ի դրությամբ, հազար մարդ <sup>22</sup>	Մեկ շնչի հաշվարկով գումարը, ՀՀ դրամ
2021	1,850,877,541.2	12,165,312.5 <sup>23</sup>	0.66	2 963.3	4,105
2020	1,855,697,120	12,662,335.6	0.68	2 959.7	4,278
2019	1,648,063,122	12,380,667.6	0.75	2 965.3	4,175
2018	1,465,200,573	10,752,516.4	0.73	2 972.7	3,617
2017	1,360,112,342	10,569,239.6	0.78	2 986.1	3,539
2016	1,376,993,041	10,713,895.9	0.78	2 998.6	3,573
2015	1,305,599,525	10,618,427.7	0.81	3 010.6	3,527

2020թ. բյուջեի հայտի հիմնավորման, ինչպես նաև ԲԴԽ տարեկան հաղորդման<sup>24</sup> մեջ նշվում է, որ ՀՀ պետական բյուջեից մեկ շնչին դատական իշխանությանը հատկացվող գումարը կազմում է մոտ 8 եվրո: Այս ցուցանիշը մոտ 8 անգամ ցածր է եվրոպական միջին ցուցանիշից (64 եվրո): Նշենք, որ թեև մեկ անձի հաշվարկով դատական բյուջեն աննշան աճ է գրանցում տարեց տարի, սակայն, գնաճը հաշվի առնելով, եվրոյով այդ գումարը կամ մնացել է նույնը, կամ՝ նվազել<sup>25</sup>: Ընդգծենք, որ ըստ Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժառովի (CEPEJ), վերը նշված հաշվարկը չպետք է կատարվի բացարձակ թվերի հիման վրա, այլ պետք է հաշվի առնվի երկրի տնտեսական վիճակը, ՀՆԱ-ն: ՀՀ-ն Եվրոպայի խորհրդի (ԵԽ) այլ երկրներին զիջում է ՀՆԱ-ի համադրությամբ դատական համակարգի բյուջե տրամադրելու տեսանկյունից<sup>26</sup>:

<sup>22</sup> [https://armstat.am/file/article/nasel\\_01.01.2021.pdf](https://armstat.am/file/article/nasel_01.01.2021.pdf)

<sup>23</sup> Հատկանշական է, որ 2021թ. դատական համակարգի բյուջեն ավելի քիչ է, քան քրեակատարողական ծառայությունների համար, որը 12,387,473.8 հազար դրամ: ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ընդունված է 2020 թվականի դեկտեմբերի 10-ին, Էջ 82, հասանելի է <https://www.gov.am/files/docs/4337.pdf>

<sup>24</sup> ԲԴԽ տարեկան հաղորդում, Երևան, 2019, Էջ 91, հասանելի է <https://court.am/hy/library-inner/31>

<sup>25</sup> Դրամի փոխարժեքի, <https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx?FilterDate=2020-03-01>

<sup>26</sup> Ավելի մանրամասն տե՛ս CEPEJ STUDIES No. 26, pp. 27-28, available at <https://rm.coe.int/rapport-avec-couv-18-09-2018-en/16808def9c>

Ներկայացված միտումներն ավելի անհանգստացնող են դատարանների ծանրաբեռնվածության զգալի աճի համատեքստում. աճել է չավարտված գործերի թիվը և գործերի ավարտելու համար անհրաժեշտ ժամանակը՝ պայմանավորված դատական գործերի թվի աճով և դատավորների անփոփոխ թվով<sup>27</sup>:

Ըստ Դատական դեպարտամենտի՝ գործնականում ծրագրի արդյունավետությունը գնահատվում է ոչ թե ֆինանսական ցուցանիշների հիման վրա, այլ ստացված և ավարտված գործերի քանակով: Նման մոտեցումը որոշակի մտահոգությունների տեղիք է տալիս: Գնահատման հիմքում դրվում են կանխատեսվող գործերի և գործնականում ստացված գործերի արդյունքները, սակայն դժվար է կանխատեսել, թե քանի դատական գործ կստացվի, ուստի քանիսը կավարտվի: Նման ցուցիչներ ունենալը, սակայն, բյուջետային ծրագրավորման պայման է, և դրանով է գնահատվում դատական համակարգի արդյունավետությունը: Ազգային Ժողովում (ԱԺ) բյուջեի կատարողականի քննարկումների ժամանակ հիմնականում պատգամավորները կանխատեսվող և ավարտված գործերի վերաբերյալ են հարցեր տալիս: ԱԺ կայքում հրապարակված ՀՀ 2019թ. պետական բյուջեով ՀՀ ԲԴԽ ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ, ներառյալ 2017-2018թթ. տեղեկանքի համաձայն, կատարողականի գնահատման ցուցանիշ ներկայացվում են կանխատեսվող գործերի քանակը, փաստացի ստացվածը, ավարտվածը, անավարտ մնացածը<sup>28</sup>: Փաստացի, սակայն, հաջորդ տարվա ֆինանսավորումը էականորեն պայմանավորված չէ փաստացի ստացված/ավարտված գործերի քանակով:

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության՝ նախորդ տարիների վիճակագրությունը ցույց է տալիս, որ արդարադատության իրականացման ծախսերը գերազանցել են դատարանների կողմից հավաքագրված պետական տուրքի գումարները 4 և ավելի անգամ<sup>29</sup>: Գործնականում ստացված գործերի քանակը և դրանց կապակցությամբ գանձված պետական տուրքի չափը որևէ ազդեցություն չունեն դատական բյուջեի չափի վրա: Ըստ այդմ, Կառավարության 2020թ. նախաձեռնած և 2021թ. ընդունված պետական տուրքի չափի և դրա գանձման կարգի փոփոխությունները, որոնցով նախատեսվել է պետական տուրքի չափի զգալի ավելացում, չեն հանգեցնի դատական համակարգի «ինքնաապահովմանը» և դատարանների բեռնաթափմանը<sup>30</sup>: Օրինակ՝ վարչական արդարադատության համատեքստում ավելի արդյունավետ կարող է լինել

<sup>27</sup> Ավելի մանրամասն ստացված գործերի, ավարտված գործերի, փաստացի տրամադրված բյուջեի մասին տե՛ս ՀՀ 2019թ. պետական բյուջեով ՀՀ ԲԴԽ ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ, ներառյալ 2017-2018 թվականները, տեղեկանքը

<sup>28</sup> Տեղեկանքը հասանելի է [http://www.parliament.am/budget\\_office.php?sel=reports\\_and\\_statements&action=references&lang=arm&id=320](http://www.parliament.am/budget_office.php?sel=reports_and_statements&action=references&lang=arm&id=320)

<sup>29</sup> Հիմնավորում «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի ընդունման, հասանելի է <https://www.e-draft.am/projects/2576/justification>

<sup>30</sup> Տե՛ս ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ ել լրացումներ կատարելու մասին, ընդունված է 2021 թվականի ապրիլի 19-ին, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152129>



վարչական մարմինների վարչարարության որակի բարձրացումը, արտադատական (վերադատության կարգով) բողոքարկման արդյունավետ մեխանիզմի ներդրումը:

Հատկանշական է, որ ծրագրային մոդելի, ծախսերի միջնաժամկետ պլանավորման մոտեցման ներդրումից հետո 2019-2021թթ. բյուջեներում արդարադատության ոլորտում ծրագրի անվանումը, նպատակը և վերջնական արդյունքը, ինչպես նաև դատարաններին վերաբերող միջոցառումները նույնությամբ կրկնվում են<sup>31</sup>: Սակայն համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված մոտեցումը վկայում է ոչ թե միջնաժամկետ և/կամ երկարաժամկետ ծրագրավորման մասին այլ նոր ձևաչափով պատմականորեն առկա ծախսերի ներկայացման մասին: Նման եզրահանգումը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ ֆինանսավորման հիմնական տողերն են վարձատրությունը և շենքերի ընթացիկ սպասարկման ծախսերը:

Դատական համակարգի 2018թ. բյուջեի կատարողականը կազմել է 96,97%, իսկ 2019թ.՝ 95.45%<sup>32</sup>: Ամենացածր կատարողականը ԲԴԽ-ին տրվող բյուջետային տողերով էր: Հաշվի առնելով կատարողականի ցուցանիշը՝ առաջին հայացքից կարող է թվալ, թե տրամադրվող բյուջեն բավարար է առկա կարիքներին: Փաստացի, սակայն, դատական համակարգը չի ստանում բավարար ռեսուրսներ բացահայտված կարիքները հոգալու, արժանապատիվ պայմաններում և իրատեսական ծանրաբեռնվածությամբ արդարադատություն իրականացնելու համար: Իսկ որոշ տողերով չձախաված միջոցների գոյացումը հիմնականում ունի օբյեկտիվ բացատրություն: Օրինակ, բազմիցս է նշվում նաև դատարանների որոշ նստավայրերի ոչ պատշաճ պայմանների մասին, սակայն այդ կարիքները հոգալու համար ֆինանսական միջոցներ չեն հատկացվում, թեև հայցվում են դատական համակարգի կողմից<sup>33</sup>: Արդյունքում, դատական համակարգի կողմից տրամադրվող ծառայությունը մատչելի, հասանելի և որակով չէ, իսկ արդարադատության մատուցման պայմանները՝ ոչ արժանապատիվ: Ըստ ԲԴԽ անդամի՝ *«ներկայումս դատական համակարգին տրամադրվող միջոցները հնարավորություն են տալիս պարզապես ապահովելու մինիմալ պահանջները՝ թուղթ, գրիչ, տեխնիկական միջոցները: Յուրաքանչյուր տարի մենք ներկայացնում ենք մեզ անհրաժեշտ բյուջեն, որը դաժանաբար կրճատվում է»*<sup>34</sup>:

Բյուջեի՝ դատական համակարգի կարիքներին համապատասխանությունը գնահատելու համար դիտարկենք 2020թ. ԲԴԽ կողմից ներկայացված հայտը և ԱԺ կողմից հաստատված բյուջեն:

Դատական դեպարտամենտի կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ դատական համակարգի 2020թ. բյուջետային հայտը կազմում էր 21,195,745 ՀՀ դրամ՝ նախատեսված մեկ ծրագրի համար: Ծրագիրն իր մեջ ներառում էր 22 միջոցառում, որից 16-ը վերաբերում էին ՀՀ

<sup>31</sup>Տե՛ս <https://www.gov.am/files/docs/3929.pdf> և <https://www.gov.am/files/docs/3124.pdf>:

<sup>32</sup>2018 և 2019 թվականների բյուջեի կատարողականն ըստ Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների, ըստ ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի թիվ ԴԴ-1 Ե3145 առ 29 ապրիլի 2020թ. գրության

<sup>33</sup> Տե՛ս, օրինակ, ԲԴԽ տարեկան հաղորդումը, Երևան, 2019թ. , էջ 130-135

<sup>34</sup>Հարցազրույց ԲԴԽ անդամի հետ, 11 փետրվարի 2021թ.

դատարաններին՝ առանձին-առանձին, մեկական ծրագիր՝ ԲԴԽ-ին ու Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնին և դատարանների պահուստային ֆոնդին, իսկ մյուս չորսը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր էին: Ըստ Դատական դեպարտամենտի ղեկավարի՝ հայտը պատրաստելիս որդեգրվել էր Նիդերլանդների բյուջետավորման մոդելը: Հայտով նախատեսվել էին նաև համապատասխան միջոցներ դատավորների և դատական համակարգի աշխատակիցների աշխատավարձերի 30-50%-ով ավելացման համար<sup>35</sup>, երաշխավորելու դատավորի մասնագիտական գործունեության համար արժանապատիվ վարձատրություն:

Սակայն վերը նշված ուղղությունների համար հայցվող միջոցները նույնպես չեն տրամադրվել: 2019 և 2020թթ. հայտերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դատական իշխանության կողմից ներկայացված 2020թ. հայտում ոչ միայն վարձատրության, այլ գրեթե բոլոր տողերով առկա էր պահանջի ավելացում: Դատական համակարգին տրամադրվեց, սակայն, պահանջված գումարի 59.7% (12,662,335.6 ՀՀ դրամ)<sup>36</sup>: Նվազեցվել են հատկացումները գրեթե բոլոր բյուջետային տողերով, բայց հիմնականում աշխատանքի վարձատրության և դատավորների ու աշխատակազմի ավելացման համար նախատեսված ծախսերը: Աժ կողմից ընդունված բյուջեում նվազեցվել է (բերվել է գործող գործակիցների չափին) վարձատրության չափը, ինչպես նաև դատավորների պլանավորվող քանակը:

Կարևոր է արձանագրել, որ հայտի ներկայացման պահին դատավորի վարձատրության չափի բարձրացման օրենսդրական հիմքը բացակայում էր: Բյուջետային հայտը պլանավորման փուլում դատական համակարգն ուներ հիմնավորված ակնկալիք, որ նման օրենսդրական հիմքը կմշակվի ու կընդունվի լիազոր մարմինների կողմից, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարձատրության չափի բարձրացման հիմքով անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների մշակումը նախատեսվել էր նաև ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությամբ և դրանից բխող 2019-2020 թվականների գործողությունների ծրագրով<sup>37</sup>:

ՀՀ 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրում և ՀՀ 2020թ. բյուջետային հայտում ԲԴԽ-ն ներկայացրել է ռազմավարական ուղղություններ<sup>38</sup>, առանձնացրել ճգնաժամային և ֆունկցիոնալ կառավարման խնդիրներ: Մասնավորապես կարևորվել է այնպիսի նպատակային ծրագրերի իրականացումը, որոնք վերաբերում են.

- էլեկտրոնային արդարադատության փուլային ներդրմանը,

<sup>35</sup>Ավելին տե՛ս <https://court.am/hy/news/185>

<sup>36</sup>Տե՛ս 2020թ. պետական բյուջեի մասին ՀՀ օրենք

<sup>37</sup>Տե՛ս, Հավելված N 2 Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշման, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487>

<sup>38</sup>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տրամադրված 2020թ. բյուջեի հայտի հիմնավորման փաթեթ

- դատական գործերի կառավարման ժամանակակից թվայնացված համակարգին,
- արդարադատության համակարգային մշտադիտարկմանը,
- արդարադատության ծախսատարության կրճատմանը,
- դատական արխիվների և ընթացիկ գործերի ամբողջական թվայնացման համակարգի արմատավորմանը,
- դատարանների շենքային ու նյութատեխնիկական պայմանների որակական բարելավմանը,
- դատարանների և դատավորների նյութական ու սոցիալական անկախության անհրաժեշտ և բավարար երաշխիքների ապահովմանը,
- դատավորների օպտիմալ ծանրաբեռնվածության ապահովմանը, նրանց գործունեության գնահատման՝ օբյեկտիվ չափանիշների վրա խարսխված համակարգի ներդրմանը և այլն:

Վերը նշված ուղղություններն ընդհանուր առմամբ համահունչ են ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությամբ նախատեսված ուղղություններին<sup>39</sup>:

Սակայն չի հաստատվել նաև դատական համակարգի շենքային պայմանների բարելավման համար հայցվող գումարը, չնայած դրա անհրաժեշտությունը հիմնավորվել է ԲԴԽ կողմից: Դատական համակարգի բյուջեի հայտում նախատեսվել էր ծախս էլեկտրոնային արդարադատության ներդրման համար՝ հաշվի առնելով Կառավարության ծրագրի առաջնահերթությունները, սակայն այս ծախսը նույնպես չի հաստատվել:

Ըստ Դատական դեպարտամենտի՝ դատական համակարգն ունի բյուջեի ավելացման կարիք: *«Շուրջ 80%-ով ապահովում ենք մեր կարիքները, բայց եթե պետական բյուջեի վիճակը լավանա, ցանկալի կլինի, որ ամբողջությամբ հագեցնենք մեր դատարանները: Էլեկտրոնային արդարադատության համար ծախսի, ինչպես նաև կապիտալ շինարարության համար նախատեսված ծախսերի կրճատումը պատճառաբանվում է նոր տեսակի կորոնավիրուսի և 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի տնտեսական հետևանքների հաղթահարման անհրաժեշտությամբ: Միջնաժամկետ եռամսյակային հայտում չի հաստատվել ոչ մի կապիտալ ծախս: Սվեյին, 2021թ. չի հաստատվել անգամ վարչական սարքավորումների համար 500 մլն ՀՀ դրամի չափով կապիտալ ծախսը, այն դեպքում, երբ*

<sup>39</sup>ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին ՀՀ կառավարություն որոշում, 10 հոկտեմբերի 2019 թվականի N 1441-Լ, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487>

*մշտապես նախատեսվել է դատարանների կարողությունների զարգացման ծախս՝ շուրջ 500-600 մլն ՀՀ դրամի չափով»<sup>40</sup>:*

Ըստ Դատական դեպարտամենտի՝ խնդրահարույց է նաև բարեփոխումների համատեքստում անհրաժեշտ ծախսի հաշվարկը: 2021թ.-ին ընթացիկ ծախսերը հնարավոր չէր պատշաճ հաշվարկել, քանի որ որոշ գործոններ անհայտ էին նախապատրաստման պահին: Օրինակ, հայտնի չէր, թե որտեղ է տեղակայվելու ստեղծվելիք հակակոռուպցիոն դատարանը, ինչ տարածք է հատկացվելու և այլն, ուստի դա ֆինանսապես ճիշտ պլանավորելը խնդիր էր<sup>41</sup>:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ կարելի է եզրահանգել, որ դատական համակարգին չի տրամադրվում բավարար բյուջե, պատշաճ կերպով հաշվի չեն առնվում դատական հակակարգի կողմից բացայտված և առաջնահերթ համարվող կարիքները, բյուջետավորման գործընթացում չի ապահովվում իրական և արդյունավետ մասնակացություն բյուջեի պլանավորման և հաստատման գործընթացում, ինչպես նաև նշված բնագավառում գործնականում՝ իշխանության ճյուղերի տարանջատումը և դատական համակարգի իրական անկախության ապահովումը:

➤ *Դատավորների թվի ավելացման անհրաժեշտությունը*

ՀՀ դատական օրենսգիրքը սահմանում է յուրաքանչյուր դատարանի դատավորների նվազագույն թիվը<sup>42</sup>: Համաձայն Դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետի՝ ԲԴԽ-ն Կառավարության համաձայնությամբ իրավասու է ավելացնել առանձին դատարանների դատավորների թվակազմը, կրճատել իր կողմից ավելացված դատավորների թվակազմը:

Ըստ դատական դեպարտամենտի՝ 2020թ. բյուջետավորման պահին դատավորների քանակը եղել է 244, իսկ Հայաստանի բնակչությունը 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 2 959.7 հազար մարդ: Այսինքն՝ 100,000 մարդու համար առկա է 8 դատավոր<sup>43</sup>: Նույն համամասնությունը եղել է 2018 թ.-ին<sup>44</sup>: Համեմատության համար նշենք, որ ԵԽ երկրների միջինը 21.4-ն է, իսկ միջինացվածը (մեդիան)՝ 17.7<sup>45</sup>: Ինչպես տեսնում ենք, ՀՀ-ում դատավորների քանակը կրկնակի ցածր է: ՀՀ-ի բնակչության չափի հետ համադրելի ԵԽ այլ երկրներում, օրինակ, Մոլդովայում, այդ ցուցանիշը 16 է, Լիտվայում՝ 27: Ավելի փոքր բնակչություն ունեցող Լատվիայում այն 29-ն է, իսկ

<sup>40</sup> Հարցազրույց ՀՀ դատական դեպարտամենտի Նյութատեխնիկական ապահովման վարչության պետի և աշխատակցի հետ, 11 փետրվարի 2021թ.

<sup>41</sup> Հարցազրույց ՀՀ դատական դեպարտամենտի Նյութատեխնիկական ապահովման վարչության պետի և աշխատակցի հետ, 11 փետրվարի 2021թ.

<sup>42</sup> Հոդված 23, 28

<sup>43</sup> Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ, հասանելի է [https://armstat.am/file/article/nasel\\_01.01.2020.pdf](https://armstat.am/file/article/nasel_01.01.2020.pdf)

<sup>44</sup> Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ, հասանելի է [https://armstat.am/file/article/nasel\\_01.01.2018.pdf](https://armstat.am/file/article/nasel_01.01.2018.pdf)

<sup>45</sup> Sté u European judicial systems CEPEJ Evaluation Report, p. 48, available at <https://rm.coe.int/evaluation-report-part-1-english/16809fc058>

Էստոնիայում՝ 18: Ավելի մեծ բնակչություն ունեցող Վրաստանում այդ ցուցանիշը հավասարագոր է ՀՀ-ին<sup>46</sup>:

Միննույն ժամանակ պետք է փաստել, որ առկա են դատավորների թափուր հաստիքներ, որոնց թիվը տարբերվում է<sup>47</sup>: Սա նշանակում է, որ անգամ դատավորների թվի ավելացման պարագայում գործնականում լինելու է թափուր հաստիքների համալրման խնդիր, հատկապես որակյալ կադրերի հաշվին: Այսինքն՝ սույն խնդրի լուծումը պետք է պլանավորվի և իրականացվի համալիր միջոցառումների շնորհիվ, որոնցից կարևորագույնն է որակյան կադրեր պատրաստումը և ներգրավվումը:

2020թ. բյուջեի հայտում նշվում է, որ վերջին տարիներին զգալիորեն ավելացել է յուրաքանչյուր դատավորին բաժին ընկնող գործերի թիվը:

**Աղյուսակ 2. Դատավորների ծանրաբեռնվածությունը 2015-2018թթ.**

Տարեթիվ	Քաղաքացիական գործերով Երևանում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը (գործ)	Քաղաքացիական գործերով մարզերում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը (գործ)	Քրեական գործերով Երևանում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը (գործ)	Քրեական գործերով մարզերում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը (գործ)
2013	632	469	66	74
2014	1068	865	65	74
2015	1425	1217	79	78
2016	1374	1501	82	76
2017	1308	1635	85	85
2018	1290	1447	81	84
2019	1674	1999	88	87

<sup>46</sup> Ibid.

<sup>47</sup> Տե՛ս [www.court.am](http://www.court.am)

2020	1632	2169	110 <sup>48</sup>	106
------	------	------	-------------------	-----

Գերծանրաբեռնվածության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ, օրինակ, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանում ստացված գործերի քանակն այնքան է, որ նիստերը նշանակվում են մեկուկես տարի հետո<sup>49</sup>:

ԱԺ մշտական հանձնաժողովների առջև 2019թ. բյուջեի կատարողականը ներկայացնելիս Դատական դեպարտամենտի ղեկավարն ընդգծել է<sup>50</sup>, որ կողմ չէ դատավորների և դատարանի աշխատակիցների թվի ավելացման միջոցով դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելուն: Ըստ նրա, նախընտրելի է զարգացնել որոշ վեճերի արտադատական լուծման մեխանիզմներ (օրինակ՝ ֆինանսաբանկային վեճերի հետ կապված)՝ հավելելով, որ նման մեխանիզմների ներդրումը երկարաժամկետ գործընթաց է, և այս առումով դատավորների և դատարանի աշխատակիցների թվի ավելացումը որպես կարճաժամկետ և միջնաժամկետ լուծում ամենաարդյունավետն է, սակայն երկարաժամկետ առումով այլ լուծումներ են հարկավոր:

Ըստ Դատական դեպարտամենտի՝ դատական համակարգին տրամադրվող բյուջեի շրջանակներում հնարավորություն չի ընձեռնվում դատական գործերի ավելացման պայմաններում ավելացնել նաև դատավորների թիվը: Իրավիճակը հարթելու համար բյուջեի հայտում, որը համահունչ էր Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությանը, առաջարկվում էր որոշ դատարաններում ավելացնել դատավորների թիվը՝ որոշակիորեն հավասարեցնելով յուրաքանչյուր դատավորի ծանրաբեռնվածությունը: Դատական դեպարտամենտի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2020թ. փետրվարի 18-ին ԲԴԽ-ն իր լիազորությունների շրջանակում դիմել է ՀՀ վարչապետին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քաղաքացիական գործեր քննող վեց դատավորի հաստիք և Վերաքննիչ վարչական դատարանում երկու դատական կազմ՝ թվով վեց դատավորի հաստիք ավելացնելու հարցի վերաբերյալ համաձայնություն ստանալու նպատակով<sup>51</sup>: 2020թ. գործադիրի հետ բանավոր պայմանավորվածությամբ նախատեսվել էր բյուջեում ներառել դատավորների թվի ավելացման համար անհրաժեշտ միջոցներ, սակայն թիվը չավելացվեց, և նշված ծախսը կրճատվեց<sup>52</sup>:

Հատկանշական է, որ նման դիմում ԲԴԽ-ն ներկայացրել է 2021թ. բյուջեի նախագծի հաստատման համար նախատեսված ժամկետներում, այլ ոչ թե ավելի շուտ՝ երաշխավորելու,

<sup>48</sup> Այն պայմանով, որ 25 դատավորներն էլ քննել են գործերը

<sup>49</sup> 2019թ. կատարողականի վերաբերյալ լսումներ, [www.parliament.am](http://www.parliament.am)

<sup>50</sup> 2019թ. կատարողականի վերաբերյալ լսումներ, [www.parliament.am](http://www.parliament.am)

<sup>51</sup> ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի թիվ ԴԴ-1 Ե-3145 առ 29 ապրիլի 2020թ. գրություն

<sup>52</sup> Հարցազրույց ՀՀ դատական դեպարտամենտի Նյութատեխնիկական ապահովման վարչության պետի և աշխատակցի հետ, 11 փետրվարի 2021թ.

որ Կառավարության համաձայնության դեպքում դատավորների թվի ավելացման համար անհրաժեշտ բյուջեն կներառվի տարեկան բյուջեի նախագծում: Մա կարևոր է ծախսերի ճիշտ պլանավորման համար, քանի որ դատավորների քանակի ավելացումը մեխանիկորեն ենթադրում է նաև այլ ծախսերի ավելացում՝ շենքային պայմանները, աշխատասենյաներ, աշխատակազմ և այլն: Նշվածը նույնպես ցույց է տալիս բյուջետավորման գործընթացի ոչ արդյունավետ պլանավորումը, երբ հայտը մշակվում է բանավոր պայմանավորվածությունների հիման վրա, սակայն արդյունքում չի հաստատվում, վատնվում են ժամանակը և մարդկային ռեսուրսները:

Մինչև ժամանակ 2021թ. փետրվարի 3-ին ԱԺ-ն ամբողջությամբ ընդունեց Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծը, որով դատական համակարգում առնվազն 17 հաստիք է ավելանալու, որոնցից առնվազն 8-ը՝ Երևան քաղաքում<sup>53</sup>: Հատկանշական է, որ օրենքի փոփոխության նախագծի փաթեթը համարվել է անհետաձգելի Կառավարության 2021 թվականի հունվարի 14 N 7-Ա որոշմամբ<sup>54</sup>:

Ըստ այդմ, պետք է ավելացվեր նաև դատավորների և աշխատակազմի վարձատրության, սոցիալական երաշխիքների, շենքային ու տեխնիկական պայմանների և այլ կարիքների ապահովման գումարը: Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում ԲԴԽ-ն դատավորների թվակազմն ավելացնելու համաձայնություն ստանալու համար պետք է դիմեր Կառավարությանը՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող առանձին դատավորների հաստիքների նախատեսման համար՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում առնվազն 17 դատավորի՝ ըստ դատարանների և հաստիքների, որից առնվազն 8՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, վերաքննիչ քրեական դատարանում՝ 3 դատավորի: Կառավարության համաձայնությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ԲԴԽ-ն պետք է ավելացներ դատավորների թվակազմը:

Ըստ Դատական դեպարտամենտի՝ օրենքով նախատեսված դատավորների թվի ավելացման դեպքում դատական համակարգին տրամադրվող բյուջեն պետք է ավելանա շուրջ 5 մլրդ ՀՀ դրամով, սակայն ավելի ստույգ չափի համար պետք է իրականացվի հաշվարկ, որը կներառի ոչ միայն դատավորների վարձատրության համար անհրաժեշտ միջոցները, այլ նաև համապատասխան աշխատակազմի ավելացում, նյութատեխնիկական ապահովվածություն և

<sup>53</sup>Տե՛ս [http://parliament.am/draft\\_history.php?id=12222](http://parliament.am/draft_history.php?id=12222)

<sup>54</sup> 4 Հունվարի 2021, 7 – Ա. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի, «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին կառավարության որոշում, հասանելի է <https://www.e-gov.am/gov-decrees/item/35448/>

այլ հարակից ծախսեր: Բացի այդ, պետք է ապահովվեն համապատասխան աշխատանքային պայմաններ<sup>55</sup>:

Վերոգրյալից եզրահանգում ենք, որ դատավորների թվի ավելացման վերաբերյալ օրենքի փոփոխություններով պահանջվող գործընթացն իրականացնելու համար սուղ ժամկետներ են նախատեսվել: ԲԴԽ-ն պետք է մինչև 2021թ. մարտի 1-ը ներկայացնի 2022թ. բյուջեի հայտը: 2020թ. բյուջեի հայտը պատրաստելիս դատավորների թվի ավելացման և դրա համար անհրաժեշտ միջոցների նախատեսման վերաբերյալ բանավոր պայմանավորվածություն էր ձեռք բերվել, կատարվել էին համապատասխան բյուջետավորման աշխատանքներ, սակայն դրա համար օրենսդրական փոփոխություններ չէին նախաձեռնվել, ինչը վկայում է ոչ պատշաճ պլանավորման, շահագրգիռ կողմերի հետ արդյունավետ խորհրդակցության չապահովման մասին: Նշված մոտեցումը կրկին վկայում է նրա մասին, որ դատավորների քանակը և մասնագիտացումը որոշելիս և դրա համար ֆինանսական և օրենսդրական հիմքեր մշակելիս Կառավարությունը պատշաճ կերպով հաշվի չի առնում դատական համակարգի կողմից բացահայտված կարիքների գնահատումները:

### 1.1.3 Շենքային պայմանների բարելավում

Ինչպես արդեն նշվել է, դատական համակարգին տրամադրվող բավարար ռեսուրսները պետք է ներառեն դատական իշխանության անկախության իրականացման համար պատշաճ շենքային պայմանները:

ՀՀ-ում դեռևս առկա են դատարանների կամ դրանց նստավայրերի վարչական շենքերի համար ոչ բավարար տարածք ունենալու կամ այլ պետական մարմինների նստավայրերից պատշաճ կերպով սահմանազատված չլինելու, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի չլինելու խնդիրները: Կառավարությունը փաստում է, որ որոշ դատարանների շենքեր նաև ապահովված չեն նվազագույն անհրաժեշտ պայմաններով՝ դատական նիստերի դահլիճներով, բաց և փակ գոտիներ ստեղծելու հնարավորությամբ և այլն<sup>56</sup>:

Ըստ Դատական դեպարտամենտի<sup>57</sup>՝ դատարանների շենքերը գտնվում են անմխիթար վիճակում, լուրջ վերանորոգման կարիք ունեն, որոշ դատարանների նստավայրերի վերանորոգումը նպատակահարմար չէ, քանի որ պետք է նորերը կառուցվեն: 2018թ. ԲԴԽ գործունեության մեկնարկից հետո Դատական դեպարտամենտին հանձնարարվել էր իրականացնել դատարանների շենքերի գնահատում: Գնահատման արդյունքները հրապարակվել են ԲԴԽ տարեկան հաղորդման մեջ: Ըստ այդմ, ՀՀ-ում 12 դատարաններում վերջին 30 տարում որևէ

<sup>55</sup> Շարքագրույց ՀՀ դատական դեպարտամենտի Նյութատեխնիկական ապահովման վարչության պետի և աշխատակցի հետ, 11 փետրվարի 2021թ.

<sup>56</sup> Բարեփոխումների ծրագիր, հավելված 2

<sup>57</sup> Շարքագրույց ՀՀ դատական դեպարտամենտի Նյութատեխնիկական ապահովման վարչության պետի և աշխատակցի հետ, 11 փետրվարի 2021թ.



հիմնանորոգում չի իրականացվել, 2004–2013թթ. կառուցվել է 17 վարչական շենք, որոնցում նույնպես ընթացիկ նորոգումների խնդիրներ են առաջացել: Քանդման ենթակա է դատարանների արխիվի շենքը: Ամբողջությամբ քանդման ենթակա է Արթիկի նստավայրի վարչական շենքը: Միսիանի նստավայրում դատարանի շենք ընդհանրապես գոյություն չունի, դատական նիստերը հրավիրվում են ոստիկանության շենքում: Զգալի թվով դատարաններում չկան նվազագույն սանիտարական ու տեխնիկական պայմաններ, առանձին նստավայրերում դատական նիստերն անցկացվում են ընդհուպ միջանցքներում: Վերակառուցման, վերանորոգման և կառուցման ենթակա են ընդհանուր 49 վարչական շենքեր: Նախնական հաշվարկով 2019թ. դրությամբ շինարարական աշխատանքների ամբողջ ծավալի համար անհրաժեշտ էր 5,213164.000 ՀՀ դրամ, որից 205 314.000 ՀՀ դրամը՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար<sup>58</sup>:

Փաստացի դատական համակարգին տրամադրվող ռեսուրսները բավարար չեն առկա կարիքները հոգալու, հատկապես՝ շենքային պայմանները բարելավելու համար: ԲԴԽ տարեկան հաղորդման մեջ պլանավորվում էր, որ դատարանների շենքային պայմանների բարելավման, միննույն ժամանակ բյուջեն շատ չճանրաբեռնելու նպատակով դատարանների շենքերի հիմնանորոգման, վերակառուցման և նոր շենքերի կառուցման աշխատանքների համար անհրաժեշտ գումարները կնախատեսվեն երկու փուլով՝ հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքների համար անհրաժեշտ գումարը՝ ԲԴԽ-ի և ՀՀ դատարանների 2020 թվականի բյուջետային հայտով, կառուցման աշխատանքների համար՝ 2021 թվականի բյուջետային հայտով<sup>59</sup>: Արդյունքների հիման վրա նախատեսվել էր համապատասխան ծախս բյուջեի և միջնաժամկետ ծախսերի հայտերում: Ծախսը հաշվարկել էր մոտավոր՝ հաշվի առնելով միջին շուկայական գները: Դատարանների բնականոն գործունեությունը և պատշաճ աշխատանքային պայմաններն ապահովելու նպատակով 2020թ.-ին շենքերի ընթացիկ նորոգման համար նախատեսվել էր 186550.0 հազ. ՀՀ դրամ, իսկ նախագծանախահաշվային աշխատանքների համար՝ 7462.0 հազ. ՀՀ դրամ: Ըստ դեպարտամենտի՝ 2021թ. կատարվել են համապատասխան աշխատանքներ, կազմվել է վերանորոգման կամ կապիտալ կառուցման ենթակա դատարանների ցանկը, կկատարվի դրանց նախագծումը՝ 2022թ. բյուջեում ներառելու համար<sup>60</sup>:

*«Մենք ունենք շատ վատ վիճակում գտնվող դատարանի շենքեր: Վստահությունը դատարանի հանդեպ ուղղակիորեն պետք է սկսենք հենց այդ տեսանկյունից, որովհետև եթե մարդը մտնում է ինչ-որ մի շենք ու ենթադրում է՝ ընդհանրապես կարո՞ղ է այստեղ լինի դատարան, քանի որ նույնիսկ չի պատկերացնում, որ այդպիսի տեղում կարող է լինել դատարան: Օրինակ, Միսիան քաղաքում մենք ունենք դատարան, որը գտնվում է ոստիկանության շենքում, մուտքը՝ կողքից, մի փոքր նեղիկ տեղ է, հազիվ բարձրանում են*

<sup>58</sup> ԲԴԽ հաղորդում, էջ 131-132

<sup>59</sup> ԲԴԽ տարեկան հաղորդում, էջ 95

<sup>60</sup> Հարցազրույց ՀՀ դատական դեպարտամենտի Նյութատեխնիկական ապահովման վարչության պետի և աշխատակցի հետ, 11 փետրվարի 2021թ.

*երկրորդ հարկ ու միանգամից երկու դուռ է բացվում՝ մի դուռը՝ դատավորի սենյակ, մյուս դուռը՝ դահլիճ. դահլիճի վիճակն էլ է սարսափելի: Այսինքն՝ արդեն իսկ այդ դատարանի ընկալումն իր մոտ խեղաթյուրված է լինում: Էլ չեմ ասում, որ ունենք դատարաններ, որ տանիք չունեն, ջուրը կաթում է նիստի ժամանակ»:*

*«Բազմաթիվ խնդիրներ ունենք, որի լուծման համար մեզ մեծ գումարներ է պետք, բայց այդ գումարները մենք չունենք: Մենք հիմա շատ խնդիրներ ունենք, որոնց լուծման համար հույսներս դնում ենք միջազգային դոնորների վրա»<sup>61</sup>:*

Ռազմավարությամբ պլանավորված էր 2019-2020թթ. դատարաններն ապահովել արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով՝ ըստ սահմանված առաջնահերթությունների և ժամանակացույցի:

Թեև նշված ծախսերը հաստատվել են ԲԴԽ կողմից, սակայն և՛ 2019թ., և՛ 2020թ. չեն հաստատվել գործադիրի կողմից՝ ծախսերի համար իրավական հիմքի բացակայության հիմնավորմամբ: Շենքային պայմանները բարելավելու համար նախատեսված գումարը ԱԺ-ն չի հաստատել:

Վերոգրյալը հաշվի առնելով, կարող ենք եզրահանգել, որ առկա են բազմաթիվ լուրջ խնդիրներ դատական համակարգի բնականոն գործունեությունն ապահովելու և պատշաճ որակի արդարադատություն մատուցելու առումով, սակայն անհրաժեշտ միջոցներ պետական բյուջեից չեն տրամադրվում, հատկապես՝ վերանորոգման և կապիտալ շինարարության համար, ծախսերի պլանավորումը և դրանց շուրջ քննարկումները կազմակերպվում են ոչ արդյունավետ: Արդյունքում դատական համակարգը որոշ ծախսեր հոգալու համար ստիպված է դիմել միջազգային գործընկեր կազմակերպությունների:

Թեև օրենսդրությամբ նախատեսվում է դատական համակարգի համար առանձին բյուջե, որը տնօրինվում է դատական համակարգի կողմից, սակայն բյուջետավորման գործընթացը կազմակերպվում է ոչ արդյունավետ, դատական համակարգը մշակում է բյուջետային հայտը գործադիր իշխանության հետ բանավոր պայմանավորվածությունների հիման վրա, որոնք ի կատար չեն ածվում, ժամանակին չի մշակվում ծախսերի հաստատման համար օրենսդրական հիմքը, որի արդյունքում դատական համակարգի կողմից բացահայտված կարիքների համար բյուջեն չի հաստատվում: Ներկայիս կառավարման համակարգում գործող մեխանիզմների համատեքստում դատական համակարգի ֆինանսավորման առումով գործնականում չի ապահովվում իշխանության ճյուղերի իրական տարանջատում, ԱԺ-ն հաստատում է Կառավարության դիրքորոշումը՝ անտեսելով դատական համակարգի կողմից առաջ քաշված առաջնահերթությունները և կարիքները:

<sup>61</sup> Հարցազրույց ԲԴԽ անդամի հետ

## 1.2 Դատավորների վարձատրության երաշխիքներ. միջազգային սկզբունքներ

Դատավորների **պատշաճ** վարձատրությունը համակարգի անկախության ապահովման երաշխիքներից է: Ի թիվս այլնի, այն կարևոր է նաև լավագույն մասնագետներ ներգրավելու տեսանկյունից:

Դատավորների վարձատրությունը պետք է **սահմանված լինի** եթե ոչ Սահմանադրությամբ, ապա առնվազն **օրենքով**<sup>62</sup>:

Հասկանալի է, որ չկա փորձագետների կողմից մշակված որևէ ուղեցույց դատավորների վարձատրության հստակ չափի վերաբերյալ: Յուրաքանչյուր պետություն ինքնուրույն է որոշում վարձատրության չափը՝ հաշվի առնելով երկրի տնտեսական վիճակը և իրողությունները: Վարձատրության չափը որոշելու հարցում ԵԴԽՄ-ն չի ուղղորդում պետություններին, սակայն ընդգծում է, որ այն պետք է հիմնվի ընդհանուր չափանիշի վրա և պայմանավորվի **օրյեկտիվ և թափանցիկ չափորոշիչներով**, այլ ոչ թե դատավորի աշխատանքի անհատական գնատահատականով<sup>63</sup>:

Դատավորների վարձատրության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ այն պետք է **հավասար լինի նույն գործառույթներ** իրականացնող բոլոր դատավորների համար: Վարձատրության չափի տարբերություններ թույլատրելի են փորձով (աշխատանքային ստաժով), դատարանի ատյանով պայմանավորված կամ այլ դեպքերում, որոնք հստակ սահմանված են օրենքով: Վարձատրության տարբերությունը, սակայն, չի կարող պայմանավորված լինել գործադիր մարմնի ներկայացուցչի անհատական որոշմամբ: Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիայի և դրան կից բացատրական գեկույցի համաձայն՝ դատավորների վարձատրությունը կարող է տարբերվել՝ պայմանավորված պաշտոնավարման ժամկետով, դատավորների կողմից իրականացվող պարտականությունների բնույթով և նրանց առջև դրված խնդիրների կարևորությամբ, որոնք պետք է գնահատվեն թափանցիկ պայմաններում<sup>64</sup>:

ԵԴԽՄ-ն ընդգծել է, որ դատավորների վարձատրությունը պետք է համարժեք լինի նրանց մասնագիտական պարտականություններին, պաշտոնական լիազորություններին և նրանց պաշտոնին համապատասխան արժանապատվությանը<sup>65</sup>: Ըստ այդմ, կարևոր է դատական համակարգի ներկայացուցիչների մասնակցությունն իրենց վարձատրության չափը որոշելիս:

<sup>62</sup>St' u, Funding of the Judiciary, ENCJ Report 2015-2016, p.5, Venice Commission report On the independence of the judicial system, Part I: the independence of judges, para. 44, ՄԱԿ-ի՝ Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքներ, 11-րդ կետ

<sup>63</sup> Summary of international and ENCJ sources, Annex I to the ENCJ Report 2015-2016, p.6, Report On the independence of the judicial system, Part I: the independence of judges, adopted by the Venice Commission, para. 46

<sup>64</sup>European Charter on the statute for judges and Explanatory Memorandum, Strasbourg, 8-10 July 1998, paras. 6.1-6.2, available at <https://rm.coe.int/16807473ef>

<sup>65</sup>Summary of international and ENCJ sources, Annex I to the ENCJ Report 2015-2016, p.6

Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիան սահմանում է, որ իրենց պաշտոնական լիազորությունները կատարելու համար դատավորների վարձատրության մակարդակը պետք է լինի այնպիսին, որպեսզի պաշտպանի հնարավոր ազդեցությունից, որը նպատակ է հետապնդում ազդել որոշումների կամ պահվածքի վրա՝ վտանգելով նրանց անկախությունը և անկողմնակալությունը<sup>66</sup>:

ԵԴԽԽ-ն անդրադարձել է նաև մեկ այլ երաշխիքի. վարձատրության չափը նշանակումից հետո **չպետք է փոխվի ի վնաս դատավորների**: Ավելին, առաջարկվում է իրականացնել դատավորների վարձատրության **պարբերական վերանայում**՝ գնաճի հետևանքները մեղմելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով: Պետք է երաշխավորվի հիվանդության, մայրության կամ հայրության վարձատրվող արձակուրդը, ինչպես նաև պատշաճ կենսաթոշակը, որը պետք է ողջամտորեն կապված լինի դատավորների աշխատանքի վարձատրության չափի հետ: Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիայում ամրագրված է, որ օրենքով նախատեսված կենսաթոշակային տարիքի հասնելուց հետո կենսաթոշակի անցած դատավորները պետք է ստանան այնպիսի կենսաթոշակ, որի չափը հնարավորինս մոտ է որպես դատավոր նրանց վերջին ստացած աշխատավարձի չափին<sup>67</sup>:

Հայեցողությամբ որոշվող պարգևավճարները և ոչ նյութական արտոնությունները պետք է բացառվեն<sup>68</sup>:

Հատկանշական է, որ Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) զեկույցի համաձայն՝ 2016 թվականին Եվրոպայում դատավորների աշխատավարձը 2.5 անգամ գերազանցում էր միջին աշխատավարձը<sup>69</sup>: Միննույն ժամանակ դատավորի վարձատրության չափը և դրա՝ միջին աշխատավարձի չափի հետ համեմատ գործակիցը տարբերվում է պետությունից պետություն:

### 1.2.1. Դատավորների վարձատրությունը ՀՀ-ում

Ինչպես արդեն նշվել է, դատավորների վարձատրությունը պետք է սահմանված լինի օրենքով, համապատասխանի դատավորների դերին և որոշվի օբյեկտիվ և թափանցիկ չափորոշիչներով:

ՀՀ սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասով երաշխավորվում է դատավորի բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն: ՀՀ դատական օրենսգրքի 57-ի հոդվածով սահմանվում են մի շարք երաշխիքներ: Օրենսգրքով սահմանվում է, որ դատավորի աշխատավարձը և դրա նկատմամբ սահմանված

<sup>66</sup>European Charter on the statute for judges and Explanatory Memorandum, Strasbourg, 8 - 10 July 1998, para. 6.1

<sup>67</sup>Funding of the Judiciary, ENCJ Report 2015-2016, p.13

<sup>68</sup>Venice Commission report 'On the independence of the judicial system, Part I: the independence of judges', para.46

<sup>69</sup> Ավելի մանրամասն տե՛ս CEPEJ STUDIES No. 26, p. 18, available at <https://rm.coe.int/rapport-avec-couv-18-09-2018-en/16808def9c>

հավելավճարները, կենսաթոշակի չափը չեն կարող պակասեցվել, բացառությամբ այն դեպքերի, երբ համարժեք պակասեցում կատարվում է բոլոր բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար: Դատական օրենսգրքով նաև ամրագրված է, որ ԲԴԽ անդամի վարձատրությունը սահմանվում է օրենքով, և այն չի կարող պակաս լինել Վճռաբեկ դատարանի դատավորի վարձատրությունից<sup>70</sup>: Օրենքով երաշխավորվում է, որ նույն գործառույթ իրականացնող նույն ատյանի դատարանի դատավորների հիմնական վարձատրության չափը նույնն է: Դատավորների վարձատրության չափի տարբերություն առաջանում է աշխատանքային ստաժով, զբաղեցված պաշտոնով և ատյանով պայմանավորված<sup>71</sup>:

Դատավորն ունի Կառավարության սահմանած պայմաններով և չափով առողջության և դժբախտ պատահարներից պետական միջոցների հաշվին ապահովագրության իրավունք: ԲԴԽ-ն սահմանված դեպքերում իր մշտական բնակության վայրից դուրս պաշտոնի նշանակված դատավորին իր դիմումի հիման վրա տրամադրվում է տվյալ վայրում բնակարանի վարձին համարժեք փոխհատուցում: Փոխհատուցման տրամադրման կարգը, առավելագույն չափն ու ժամկետը սահմանում է Կառավարությունը: Դատավորն օգտվում է նաև հանրային ծառայողի համար սահմանված սոցիալական երաշխիքներից: «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքով և Դատական օրենսգրքով սահմանվում են նաև դատավորների կենսաթոշակ ստանալու երաշխիքները: Այսպիսով, դատավորների վարձատրության երաշխիքներն ամրագրված են բարձրագույն մակարդակում՝ Սահմանադրությամբ և կարգավորվում են օրենքներով:

Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ գործնականում դատավորների կենսաթոշակի սահմանման և հաշվարկման առումով առկա էին խնդիրներ՝ պայմանավորված օրենսդրության փոփոխությամբ: Մասնավորապես, «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 2014 թ. հուլիսի 1-ից, դատավորի կենսաթոշակի չափը հաշվարկելիս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն օրենքը մեկնաբանել է ի վնաս դատավորների: Մի խումբ դատավորներ դատարանում վիճարկել են Նախարարության կողմից նշանակված կենսաթոշակի չափը: ՀՀ վարչական դատարանը գտել է, որ մինչև «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի ուժի մեջ մտնելը, այն է մինչև 2014 թ. հուլիսի 1-ը, որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձը պետք է հաշվարկային հիմք ընդունվի միայն այն դեպքում, եթե այդ աշխատավարձի հիմքով հաշվարկված կենսաթոշակի չափն ավելի մեծ է, քան «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված աշխատավարձի հիմքով հաշվարկված կենսաթոշակի չափը՝ առաջնորդվելով ՀՀ սահմանադրական դատարանի (ՄԴ) թիվ ՄԴՌ-1302 որոշմամբ արտահայտված իրավական

<sup>70</sup>ՀՀ Դատական օրենսգրք, 83-րդ հոդված 2-րդ մաս

<sup>71</sup> Տե՛ս, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՕ-157-Ն ՀՀ օրենք

դիրքորոշումներով<sup>72</sup>: Դատարանը հաստատել է նաև, որ արտադատական կարգով կենսաթոշակի չափի նվազեցումը թույլատրելի չէ<sup>73</sup>:

ՀՀ սահմանադրական դատարանը (ՄԴ)ճ իր որոշումներում անդրադառնալով դատական իշխանության անկախության, դատավորի կարգավիճակի, դրա առանձնահատկություններն օրենքով կանոնակարգելու հարցերին, բազմիցս արձանագրել է դատավորի նյութական և սոցիալական անկախության նախադրյալների ապահովման առանձնահատուկ կարևորությունը<sup>74</sup>:

2019թ. որոշմամբ ՄԴ-ն վերահաստատել է միջազգային կառույցների կողմից մշակված մի շարք սկզբունքներ, որոնք վերաբերում են դատարանների ֆինանսավորմանը, դատավորների անկախության սոցիալական երաշխիքներին, պատշաճ վարձատրության և կենսաթոշակի ապահովմանը<sup>75</sup>:

«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքը սահմանում է պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության չափը՝ ներառյալ եկամտային հարկը: Այն կազմված է հիմնական աշխատավարձից, լրացուցիչ աշխատավարձից և պարգևատրումներից: Լրացուցիչ աշխատավարձը ներառում է հավելումները և հավելվածները<sup>76</sup>: Պետական պաշտոն զբաղեցնող անձանց լրացուցիչ աշխատավարձը չի կարող գերազանցել հիմնական աշխատավարձի 30 տոկոսը:

Հատկանշական է, որ ըստ ԲԴԽ-ի՝ «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1515-Ն որոշմամբ դատական համակարգին 2019 թվականին 1,845,618.0 հազար ՀՀ դրամ գումար է հատկացվել մինչ օրս երբևիցե չկիրառված բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4112 (Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ) հոդվածով, որի մեջ ներառված են նաև դատավորների պարգևատրմանն ու խրախուսմանն ուղղված միջոցները՝ որպես նրանց սոցիալական անկախության ամրապնդման երաշխիք<sup>77</sup>:

Փորձենք պարզել, թե արդյո՞ք ՀՀ դատավորների վարձատրության չափը համապատասխանում է միջազգային չափանիշներին և արդյո՞ք ԲԴԽ կողմից բյուջետային հայտով առաջարկվող ավելացումը՝ առաջիկա երեք տարվա ընթացքում 30-50%-ը, համաչափ էր:

<sup>72</sup> ՎԴ5/0060/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931844](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931844)

<sup>73</sup> ՎԴ/4671/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809934839](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934839)

<sup>74</sup> ՄԴՈ-647, ՄԴՈ-723, ՄԴՈ-731 ՄԴՈ-865, Տե՛ս Սահմանադրական դատարանի 18 հուլիսի 2019թ. ՄԴՈ-1463 որոշում, հասանելի է <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131927>

<sup>75</sup> Նույն տեղում, կետ 4.2.

<sup>76</sup> Հոդված 6

<sup>77</sup> ԲԴԽ հաղորդում, op.cit.

2020թ. բյուջեի հայտի հիմնավորման մեջ ընդգծվում է, որ ՀՀ դատավորի համար սահմանված աշխատավարձն անհամեմատ զիջում է ԵՄ անդամ գրեթե բոլոր պետություններին<sup>78</sup>: Հարկ է նշել, որ խոսքը գնում է բացարձակ թվերի մասին, և հաշվի չի առնվում երկրի տնտեսական իրավիճակը:

ԵՄ երկրներում դատավորների վարձատրության չափը որոշելու հարցում միանման մոտեցում չկա:

**Բուլղարիայում** օրենքով նախատեսված դատավորի նվազագույն բազային աշխատավարձը երկու անգամ ավելի է, քան հանրային ոլորտում առկա միջին աշխատավարձը:

**Դանիայում** թեև դատավորների աշխատավարձը կարգավորվում է քաղաքացիական ծառայողների համար գործող համաձայնագրով, սակայն դատավորների պաշտոնի մակարդակը (գործակիցը) քննարկվում և հաստատվում է Դատավորների ասոցիացիայի և Ֆինանսների նախարարության բանակցությունների միջոցով:

Եթե որոշ երկրներում սահմանվում է բազային աշխատավարձը, որը կարող է ավելանալ հավելավճարների հաշվին, ապա **Էստոնիայում** հակառակ մոտեցումն է որդեգրվել. սահմանվում է դատավորների համար ամենաբարձր աշխատավարձը և ըստ պաշտոնների համապատասխան գործակիցներ՝ բոլոր դատավորների աշխատավարձը հաշվարկելու համար: Ամենաբարձր աշխատավարձը սահմանվել է 5,200 եվրո: Գերագույն դատարանի դատավորի գործակիցը 0,85-ը, երկրորդ աստիճանի դատարանի դատավորինը՝ 0,75, իսկ առաջին աստիճանի դատավորինը՝ 0,65: Դատարանների նախագահները ստանում են լրացուցիչ վճար՝ նախագահի պարտականությունները կատարելու համար:

**Լիտվայում** օրենքով սահմանվում է, որ դատավորի աշխատավարձը հաշվարկվում է խորհրդարանի կողմից հաստատված բազային չափի հիման վրա: Ընդհանուր իրավասության դատարանի դատավորի աշխատավարձը կազմված է բազային աշխատավարձից և համապատասխան բազային գործակիցից, ինչպես նաև աշխատանքային փորձով պայմանանավորված հավելավճարից (բազային աշխատավարձի 3%-ը յուրաքանչյուր երեք տարվա համար, սակայն ոչ ավել, քան բազային աշխատավարձի 30 %-ը):

**Նիդերլանդներում** դատավորների աշխատավարձի չափը որոշվում է Արդարադատության նախարարության և դատավորների արհմիության միջև բանակցությունների արդյունքում, իսկ դատական խորհուրդը որևէ դերակատարում չունի:

---

<sup>78</sup>Եվրոպայի խորհրդի CEPEJ կողմից 2016թ. կատարված և 2018թ. հրապարակված՝ «Եվրոպական դատական համակարգեր. Արդարադատության արդյունավետություն և որակ» վերտառությամբ ուսումնասիրություն:

**Լեհաստանում** դատավորի աշխատավարձը պայմանավորված է դատարանի մակարդակով՝ աստիճանով, տվյալ պաշտոնում աշխատանքային փորձով (0-5, 5-10, 1-15 և >15 տարի), ինչպես նաև ընդհանուր աշխատանքային փորձով: Այս բազային աշխատավարձն ավելանում է համապատասխան գործակցով բազմապատկվելու արդյունքում (2.05-ից մինչև 3.23-ը):

**Սլովակիայում** դատավորի բազային աշխատավարձը հավասար է Ազգային խորհրդի անդամի աշխատավարձին, որը, իր հերթին, երեք անգամ ավել է նախորդ տարվա միջին աշխատավարձից:

**Իսպանիայում** աշխատավարձը կազմվում է ֆիքսված չափից՝ աշխատավարձ և պաշտոնի մակարդակ, և լրացուցիչ վճարից, որը պայմանավորված է սպասարկվող բնակչությամբ, ներկայացուցչությամբ, աշխատանքի բարդությամբ: Փոփոխական գործոնը որոշվում է Ընդհանուր դատական խորհրդի կողմից սահմանված մոդուլներով և պայմանավորված է յուրաքանչյուր դատավորի գնահատման արդյունքներով:

CEPEJ-ն դատավորների վարձատրության պատշաճությունը գնահատում է երկու ցուցանիշի հիման վրա. դատավորի՝ կարիերայի սկզբում աշխատավարձը (սկզբնական աշխատավարձ) և բարձրագույն դատական աստիճանի դատավորի միջին աշխատավարձը՝ երկրի միջին աշխատավարձի համեմատ: Այս մոտեցմամբ, բացարձակ թվերը հաշվի առնելով, Հայաստանի դատավորները վարձատրվում են լավագույնս, քանի որ կարիերայի սկզբում դատավորը ստանում է միջին աշխատավարձի քառապատիկը, իսկ կարիերայի վերջում՝ վեցապատիկը: Նշենք, որ, օրինակ, Բելգիայի, Գերմանիայի, Իսլանդիայի, Լատվիայի, Նիդերլանդների, Շվեդիայի, Սլովենիայի դատավորները կարիերայի սկզբում ստանում են միջին աշխատավարձի երկպատիկից էլ պակաս, ինչը ամենացածրն է ԵԽ անդամ երկրներում: Դատավորների աշխատավարձը, սակայն, կարիերայի ընթացքում զգալի՝ 2-2,5 անգամ ավելանում է:

2019թ. ՀՀ-ում միջին ամսական աշխատավարձը եղել է 182,673.0 ՀՀ դրամ<sup>79</sup>, իսկ առաջին աստիճանի դատարանի ամենացածր վարձատրվող դատավորը ստանում էր 661,000 ՀՀ դրամ (3.6 անգամ ավել, քան միջին աշխատավարձը): 2019թ.-ին առաջին աստիճանի դատավորի մեկ ամսվա միջին աշխատավարձը 808,810 ՀՀ դրամ էր (2018թ.-ին՝ 825,900 ՀՀ դրամ)<sup>80</sup>, իսկ Վճռաբեկ դատարանի դատավորների միջին աշխատավարձը, որը ներառում է աշխատանքային ստաժի համար վճարվող հավելավճարը՝ 1 201 845.6 ՀՀ դրամ, այսինքն՝ միջին աշխատավարձից 6.6 անգամ ավել<sup>81</sup>: 2020 թ. հունվար ամսվա դրությամբ ՀՀ միջին անվանական աշխատավարձը կազմել է 191,012 ՀՀ դրամ: Առաջին աստիճանի դատարանի դատավորի նվազագույն հիմնական աշխատավարձը, առանց հավելավճարների, կազմում է 661,000 ՀՀ դրամ, որը երեք անգամ ավելի

<sup>79</sup><https://armstat.am/am/?nid=12&id=08001>

<sup>80</sup> Վարձատրության չափը պայմանավորված է նաև աշխատանքային ստաժի համար վճարներով: Հասանելի է <https://court.am/hy/statistic-inner/182>

<sup>81</sup> Տե՛ս <https://court.am/hy/reporting/145>



է միջին աշխատավարձից, իսկ Վճռաբեկ դատարանի դատավորի հիմնական աշխատավարձը կազմել է 991,500 ՀՀ դրամ՝ միջին աշխատավարձի հինգապատիկը:

Թեև դատավորների վարձատրության իրավական երաշխիքները և նախատեսված բանաձևն ընդհանուր առմամբ համահունչ են վերը թվարկված սկզբունքներին, գործնականում վճարվող չափը ոչ միայն հավասար չէ օրենքով նույն գործակիցն ունեցող պաշտոնյայի աշխատավարձին, այլ նաև չի ծառայում իր նպատակներին՝ պարտականություններին համաչափ լինելուն և դատավորներին կողմնակի ազդեցությունից զերծ պահելուն:

Դատավորների և ԲԴԽ անդամների դեպքում սահմանվում են բարձրաստիճան պաշտոնատար անձ հանդիսացող քաղաքական, հայեցողական և քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման 10-ից 15-ը գործակիցներ<sup>82</sup>: Առաջին աստիճանի դատավորի դրույքաչափի հաշվարկման գործակիցը նույնն է, ինչ, օրինակ, ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի նախագահի, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության պետի, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի և ՀՀ նախարարի առաջին տեղակալների, ՀՀ մարզպետների, ՀՀ ԱԺ պատգամավորների, ՀՀ ԱՆ դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողի, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի կամ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տնօրենի պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցը: Վերաքննիչ դատարանի դատավորի դրույքաչափի հաշվարկման գործակիցը նույնն է, ինչ ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի դրույքաչափերի հաշվարկման գործակիցը: Վճռաբեկ դատարանի դատավորի դրույքաչափերի հաշվարկման գործակիցը հավասարեցված չէ որևէ պաշտոնի հետ, սակայն այն ավելի ցածր է, քան ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության կամ Ազգային անվտանգության ծառայության պետերի, ՀՀ նախարարների, ինչպես նաև ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի կամ ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնային գործակիցը:

Այս հավասարությունը պայմանական է, քանի որ վերջին տարիներին աշխատանքի փաստացի վարձատրության բարձրացման համար կիրառվում են պարզևատրումների կանոնավոր վճարումներ: Արդյունքում նույն պաշտոնային գործակից ունեցող դատարանի դատավորը և նախարարի տեղակալը փաստացի վարձատրվում են զգալի տարբերությամբ: Նման մոտեցումը, երբ աշխատանքի վարձատրության չափը կախված է ոչ թե օրենքով սահմանված աշխատավարձից, այլ կանոնավոր պարզևատրումների չափից և քանակից, հանգեցնում է տարբերակված մոտեցման և դատավորների պաշտոնին ու լիազորություններին ոչ համարժեք վարձատրության:

<sup>82</sup> Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին ՀՀ օրենք, Հավելված 1

2020թ.-ին Վարչապետի որոշմամբ սահմանվել են նախարարների, մարզպետների, գերատեսչությունների ղեկավարների ամսական պարգևատրումների չափեր: Ըստ ՀՀ կառավարության պարզաբանման՝ սահմանվել են պարգևավճարի ֆիքսված չափեր, օրինակ, փոխվարչապետի համար նախատեսվել է պարգևատրում՝ այն չափով, որ ամսական զուտ եկամուտը կազմի 1.500.000 դրամ՝ ներառյալ աշխատավարձը, փոխնախարարներինը՝ 1 միլիոն ՀՀ դրամ, մարզպետներինը՝ 900 հազար ՀՀ դրամ<sup>83</sup>:

Ստացվում է, որ ֆիքսված, առանց որևէ գործով հաշվի առնելու պարգևավճարների վճարմամբ փաստացի լուծվում է պաշտոնատար անձի փաստացի աշխատավարձի բարձրացման խնդիրը, որը չի բխում «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի տրամաբանությունից ու նպատակից: Նման մոտեցմամբ դատավորները վարձատրության նույն գործակից ունեցող գործադիր իշխանության ներկայացուցիչների համեմատ հայտնվում են անբարենպաստ վիճակում:

Այդպես, օրինակ, ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալը 2019թ. դրությամբ ուներ ութ տարվա աշխատանքային փորձ և ստանում էր 1 մլն ՀՀ դրամ ամսական աշխատավարձ ու պարգևավճար<sup>84</sup>: Նույնքան աշխատանքային փորձ և նույն գործակիցն ունեցող առաջին աստիճանի դատարանի դատավորը 2019թ. ստանում էր 779 644 ՀՀ դրամ, ներառյալ՝ պաշտոնային դրույքաչափը և աշխատանքային ստաժի համար հավելավճարը<sup>85</sup>:

Առկա է կարծիք, որ ներկայիս մոտեցումը՝ հավասարեցնել որոշակի խմբերի պաշտոնատար անձանց վարձատրության գործակիցը, թույլ չի տալիս պատշաճ կերպով հաշվի առնել դատավորի անհատական պատասխանատվությունը և աշխատանքի բնույթն ու առանձնահատկությունները:

Ըստ դատական համակարգի ներկայացուցիչների՝ դատավորի վարձատրության չափը, աշխատանքի ահռելի, վարձատրությանը ոչ համաչափ ծավալը հանգեցնում է նրան, որ լավ մասնագետների համար ոլորտը գրավիչ չէ:

*«Մենք պահանջում ենք որակյալ արդարադատություն, բայց չենք ստեղծում նույնիսկ այն մինիմալ պայմանները, որոնք պետք է ապահովեն այդ որակյալ արդարադատությունը: Դատավորի վարձատրությունը չեն բարձրացնում՝ պատճառաբանելով, որ դատական իշխանությունն այսօր պատշաճ մակարդակի արդարադատություն չի մատուցում, ժողովուրդը չի հասկանա իշխանությանը, թե ինչու է այդքան լավ վերաբերվում դատավորների: Իսկ մենք որակյալ կադրեր չենք*

<sup>83</sup> Ավելի մանրամասն տե՛ս ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի պարզաբանումը ԱԾ նիստում, <https://www.youtube.com/watch?v=DRETRLp1WTE>

<sup>84</sup> Տե՛ս, <http://cpcarmenia.am/hy/declarations-registry/id=58917/>

<sup>85</sup> Տե՛ս, օրինակ, 2019թ. հայտարարագիրը <http://cpcarmenia.am/hy/declarations-registry/id=51414/>

*կարողանում ներառել դատական համակարգում հենց այդ պատճառով, քանի որ նրանք մասնավոր սեկտորում տասնապատիկ ավել եկամուտ կարող են ունենալ»<sup>86</sup>:*

ՀՀ 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2020թ. բյուջետային հայտով ամենամեծ տարբերությունը վերաբերում էր դատավորների և դատական համակարգի աշխատակազմի վարձատրությանը, ինչը պայմանավորված է 30-50% վարձատրության չափի աճով, ինչպես նաև հաստիքների ավելացմամբ: Ինչպես արդեն նշվել է, բյուջետային հայտը ներկայացնելու պահին գործող օրենսդրությամբ ԲԴԽ-ն իրավունք չուներ ազդել դատավորների աշխատավարձի չափը որոշելու վրա, քանի որ առկա չէր օրենսդրական հիմքը, սակայն փաստացի դա արվել էր: Ավելին, եռամյա կտրվածքով մասնակի ավելացում նախատեսելը շատ բարդ է՝ հաշվի առնելով վարձատրությունը կարգավորող օրենսդրական նորմերի բնույթը:

Ըստ Դատական դեպարտամենտի՝ ԲԴԽ կողմից հաստատված 2020թ.-ի բյուջեն կրճատվել է մոտ 5 մլրդ ՀՀ դրամով, որից 2 մլրդ-ը՝ վարձատրություն հողվածով: ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ դեռևս չէին կատարվել, դատավորների քանակը չէր ավելացել, և իրավական հիմքի բացակայության հիմնավորմամբ այդ գումարը կրճատվել էր, քանի որ Ֆինանսների նախարարությունը ֆինանսավորում է միայն գործող օրենսդրության համաձայն: Հաշվի առնելով, որ վարձատրության ավելացում նախատեսված է Կառավարության ծրագրով՝ ՀՀ արդարադատության նախարարությունը պետք մշակի և նախաձեռնի օրենսդրության համապատասխան փոփոխություն:

Մյուս կողմից՝ իրավական հիմք չէր ստեղծվել հայցվող ֆինանսական միջոցների փաստացի բացակայության պատճառով: Նշենք, որ 2019թ.-ի բյուջեի հայտով նախատեսված էր դատավորների վարձատրության ավելացում: Ի դեպ, բյուջեն չծանրաբեռնելու նպատակով դատական համակարգն առաջարկում էր նախատեսել աստիճանական ավելացումներ երեք տարվա ընթացքում<sup>87</sup>:

*«Մենք պլանավորում ենք բարձրացում մի թիվ, բայց այդ թիվը կրճատվում է: Մա այն պարագայում, որ և՛ Կառավարության ծրագրում է նախատեսված, և՛ դատավորների ծանրաբեռնվածությունն է շատ: Բայց ո՛չ դատավորների քանակն է ավելանում, ո՛չ էլ՝ աշխատավարձը: Դրա համար մենք որևէ եվրոպական երկրի հետ, նույնիսկ ամենահետամնաց պետության հետ այս պահին դժվար կարողանանք համեմատվել»:*

Հիմք ընդունելով բարձրաստիճան պաշտոնատար անձանց վարձատրության առանձնահատկությունները սահմանող օրենքի դրույթները՝ Դատական դեպարտամենտի

<sup>86</sup>ԲԴԽ անդամի հետ հարցազրույց, 11 փետրվարի 2021թ.

<sup>87</sup>Հարցազրույց ՀՀ դատական դեպարտամենտի Նյութատեխնիկական ապահովման վարչության պետի և աշխատակցի հետ, 11 փետրվարի 2021թ.

ներկայացուցիչները որպես լուծում առաջարկում են կամ ավելացնել դատավորների համար սահմանված գործակիցը, կամ դատավորների վարձատրությունն առանձնացնել ընդհանուր աղյուսակից, չնույնացնել այլ պաշտոնատար անձանց գործակցի հետ:

*«Կառավարությունն էլ պետք է շահագրգռված լինի այս հարցին լուծում տա, միայն մենք չէ»:*

Վարձատրության բարձրացում նախատեսված է նաև բյուջեի հայտի ներկայացումից ավելի ուշ հաստատված Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ և դրանից բխող գործողությունների ծրագրերում<sup>88</sup>: Ռազմավարության հիմնավորման մեջ նշվում է, որ դատավորներին և նրանց աշխատակազմերին մրցունակ աշխատավարձի տրամադրումը դատական համակարգ բարձր կարգի մասնագետների մուտքը խրախուսելու և նրանց անկախությունն ապահովելու տեսանկյունից անկյունաքարային նշանակություն ունի: Ըստ այդմ, ռազմավարությամբ ամրագրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է դատավորներին և նրանց աշխատակազմերին ապահովել համարժեք վարձատրությամբ, ինչպես նաև ավելացնել նրանց թվակազմը: Այս մոտեցումը համահունչ է վերը նշված միջազգային մասնագիտական կառույցների կողմից սահմանված սկզբունքներին: Ռազմավարության հեղինակները փաստել են, որ ներկայումս դատավորների և նրանց աշխատակազմերի վարձատրությունը համարժեք չէ նրանց ծանրաբեռնվածությանը, ինչի հետևանքով ոչ միայն վտանգվում է դատարանների անաչառությունը և ստեղծվում են կոռուպցիոն ռիսկեր, այլև առաջատար իրավաբանների համար դատական համակարգը մնում է ոչ գրավիչ:

Ինչպես արդեն նշվել է, դատավորների ծանրաբեռնվածությունը զգալիորեն աճում է, մինչդեռ՝ դատավորների պաշտոնային դրույքաչափը փոփոխության չի ենթարկվել 2014թ.-ից: Ռազմավարության նպատակներից մեկը *Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդումն* է: Այդ նպատակին հասնելու համար Կառավարությունը նախատեսում է իրականացնել մի շարք գործողություններ, այդ թվում՝ դատավորին տրամադրվող աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացում և կարողությունների զարգացում: Դա իրականացնելու համար անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ, քանի որ դատավորի վարձատրության հարցերը կարգավորվում են օրենքով: Գործող կարգավորումների համաձայն՝ դատավորի վարձատրությունը փոփոխելու համար անհրաժեշտ է կամ վերանայել գործակիցը, կամ առանձին կարգավորում նախատեսել դատավորների վարձատրության չափը և սկզբունքները կարգավորելու համար: Օրենքի փոփոխությունների մշակումը, նախագծի քննարկումն ու հաստատումը նախատեսված էր իրականացնել 2019-2020թթ. ընթացքում, սակայն դա տեղի չունեցավ: Հատկանշական է, որ այդ գործողության արդյունք է նշվել ոչ միայն դատավորին տրամադրվող աշխատավարձի և դրա

<sup>88</sup> ՀՀ կառավարությունն ընդունեց 2019 թվականի N 1441-Լ, ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487>

նկատմամբ սահմանված հավելավճարների չափի բարձրացումը, այլև դատավորների կարողությունների զարգացումը, այսինքն՝ միջոցառման և արդյունքի ձևակերպումները չեն տարբերվում միմյանցից:

Որպես ակնկալվող արդյունք նշված է, որ բարեփոխումների այս ուղղության արդյունքում դատական իշխանությունն ավելի գրավիչ կդառնա առաջատար մասնագետների համար, կնվազեն դատական իշխանությունում կոռուպցիոն ռիսկերը, ինչպես նաև զգալիորեն կնվազի դատավորների ծանրաբեռնվածությունը, ինչը կնպաստի գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանմանը: Նշված չեն, սակայն, ելքային տվյալներ՝ հաջորդ տարի համեմատություն անցկացնելու համար:

2021թ. օգոստոսի 14-ին ԲԴԽ նախագահի պաշտոնակատար Գագիկ Ջհանգիրյանը հայտնեց, որ «աշնանը մենք կունենանք նախագիծ, որով դատավորների աշխատավարձերն էլ կբարձրանան: Եթե չհավասարվի Հակակոռուպցիոն դատարանի դատավորների աշխատավարձերին, ապա չնչին չափով ցածր կլինի»<sup>89</sup>:

Հիշեցնենք, որ ըստ Վենետիկի հանձնաժողովի, դատավորների վարձատրությունը պետք է հավասար լինի նույն ատյանի և նույնական գործառույթների իրականացնող բոլոր դատավորների համար: Վարձատրության չափի տարբերություններ թույլատրելի են փորձով (աշխատանքային ստաժով), դատարանի ատյանով պայմանավորված կամ այլ դեպքերում, որոնք հստակ սահմանված են օրենքով: Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիայի և դրան կից բացատրական զեկույցի համաձայն՝ դատավորների վարձատրությունը կարող է տարբերվել՝ պայմանավորված պաշտոնավարման ժամկետով, դատավորների կողմից իրականացվող պարտականությունների բնույթով և նրանց առջև դրված խնդիրների կարևորությամբ, որոնք պետք է գնահատվեն թափանցիկ պայմաններում:

Ներկայումս առաջարկվում է ստեղծվող Հակակոռուպցիոն դատարանի դատավորների վարձատրության չափը սահմանել զգալիորեն ավելի բարձր, քան նույն ատյանի ընդհանուր իրավասության կամ վարչական դատարանի դատավորի վարձատրությունը<sup>90</sup>: Մասնավորապես, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքում առաջարկվում է կատարել լրացումներ, ըստ որոնց՝ Հակակոռուպցիոն դատարանի նախագահի համար կսահմանվի (այս պահի դրությամբ՝ 18 1.190.520 ՀՀ դրամ), իսկ դատավորի համար՝ 17 գործակիցը (այս պահի դրությամբ՝ 1.124.380 ՀՀ դրամ): Ինչպես նշվել է, ներկայումս առաջին

<sup>89</sup> ԲԴԽ նախագահի պաշտոնակատարն այցելել է արագածոտնի, շիրակի եվ լոռու մարզերի դատարաններ, <https://court.am/hy/news/443>

<sup>90</sup> <https://www.e-draft.am/projects/2644>

ատյանի դատավորի վարձատրության գործակիցը 10 է, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահինը՝ 15<sup>91</sup>:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարող ենք եզրահանգել, որ թեև ՀՀ օրենսդրության համաձայն, ԲԴԽ-ն կարող է դիմել Կառավարությանը դատավորների թիվն ավելացնելու նպատակով վերջինիս համաձայնությունը հայցելու համար, այնուամենայնիվ Կառավարությունը կարող է այդ դիմումին համաձայնություն չտալ, թեև դատական համակարգն այդ կարիքը բացահայտել է: Տարեց տարի աճող դատական գործերի համատեքստում դատավորների թիվը կարող է էական ազդեցություն ունենալ դատարանների աշխատանքի արդյունավետության վրա: Թեև դատական համակարգի ծրագրի վերջնական արդյունքը պետք է լինի Դատական իշխանության գործունեության արդյունավետությունը և դատական պաշտպանության իրավունքի ապահովմանը, որոշ կարևոր հարցերում դատական համակարգը զգալիորեն կախված է Կառավարությունից: Նման կախվածության և գործող մեխանիզմների թերությունների արդյունքում, օրինակ, 2020թ. օրենքի փոփոխությամբ նախատեսված դատավորների թվի ավելացման համար անհրաժեշտ ծախսերը չէին պլանավորվել ու ներառվել 2021թ.-ի դատական համակարգի բյուջեում:

Բացի այդ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձանց, այդ թվում՝ դատավորների վարձատրության սկզբունքների երաշխավորման առումով առկա է խնդիր, որի արդյունքում վարձատրության նույն գործակիցն ունեցող գործադիր իշխանության ներկայացուցիչների համեմատ դատավորները հայտնվում են անբարենպաստ վիճակում և փաստացի վարձատրվում են ավելի ցածր, որի արդյունքում չի երաշխավորվում նրանց մասնագիտության արժանապատիվ աշխատավարձ:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ բյուջեի նախապատրաստման փուլում չեն ապահովվում պատշաճ խորհրդակցություններ դատական և գործադիր իշխանությունների միջև, իսկ տարաձայնության դեպքում՝ կարևորվում է գործադիր կարծիքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է եզրահանգել, որ թեև ֆորմալ առումով դատավորների աշխատավարձը միջին աշխատավարձի չափի համեմատ ավելի բարձր է, քան ԵԽ անդամ երկրների միջինացված չափը, գործնականում չի ապահովվում դատավորի պաշտոնին հարիր, պատասխանատվության աստիճանին համապատասխան վարձատրություն: Ավելին, այն բացասականորեն տարբերվում է պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման նույն գործակից ունեցող գործադիր իշխանության պաշտոնյաների փաստացի վարձատրությունից:

---

<sup>91</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docID=87706>

## II. Մասնակցությունը բյուջեի կազմման, քննարկման և տնօրինման գործընթացներին

### 2.1. Մասնակցությունը բյուջեի կազմման, քննարկման և տնօրինման գործընթացներին. միջազգային սկզբունքներ

Միջազգային մասնագիտացված կառույցները բազմիցս շեշտել են բյուջեի կազմման բոլոր փուլերին, խորհրդարանի հետ քննարկմանը, ինչպես նաև հատկացված բյուջեի տնօրինմանը դատական իշխանության ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը: Դատական համակարգի և դատական խորհուրդների մասնակցայնության ապահովման անհրաժեշտության անդրադարձել են մասնավորապես ՄԱԿ-ի Դատավորների և փաստաբանների անկախության համար պատասխանատու հատուկ զեկուցողը<sup>92</sup> և ԵԴԽՄ-ն<sup>93</sup>:

Կարևոր է, որ խորհրդարանի կողմից դատական համակարգի բյուջեն ընդունելու միջոցառումներում պարտադիր ապահովվի այնպիսի ընթացակարգ, որի դեպքում հաշվի կառնվեն դատական մարմինների դիրքորոշումները<sup>94</sup>: Ցանկալի է, որ դատական իշխանության ինքնակառավարման մարմինն ունենա խորհրդարանին կամ դրա իրավասու հանձնաժողովներից մեկին բյուջետային հայտ ներկայացնելու իրավասություն: ԵԴԽՄ-ն խրախուսում է բյուջեի ձևավորման հարցում դատարանների լայն ներգրավվածությունը, որպեսզի դատարանները ներկայացնեն իրենց դիրքորոշումն անհրաժեշտ ֆինանսների վերաբերյալ: Այն կարող է տարբեր ձևաչափ ունենալ, օրինակ՝ դատական խորհրդին՝ դատարանների ֆինանսավորման հայտերը կազմելու, դատարանների կարիքները գնահատելու հարցում համակարգողի դերի վերապահում՝ դատական խորհրդի ուղիղ կապը խորհրդարանի հետ ապահովմամբ<sup>95</sup>:

Այս համատեքստում կարևորվել է նաև դատական խորհրդի դերը<sup>96</sup>: Դատական խորհուրդը պետք է ունենա իրավասություն և կարողություն իրեն տրամադրվող բյուջեի վերաբերյալ արդյունավետորեն բանակցելու և այն կազմելու հարցում<sup>97</sup>: Դատական խորհուրդները կամ դատարանների կառավարմանը մասնակցելու գործառնությունը օժտված այլ անկախ մարմինները

---

<sup>92</sup>Report of the Special Rapporteur on the Independence of Judges and Lawyers, Leandro Despouy, UN General Assembly, 11th session of the Human Rights Council, 2009, 24 March, 2009, A/HRC/11/41, paras. 37-43, available at <https://undocs.org/A/HRC/11/41>

<sup>93</sup>Funding of the Judiciary, ENCJ Report 2015-2016, p. 13

<sup>94</sup>ԵԴԽՄ, Կարծիք թիվ 2 (2001), պարբ. 10

<sup>95</sup>Նույն տեղում, պարբ. 11

<sup>96</sup>Council of Europe, European Charter on the Statute of Judges, 1998, para. 1.8.; Venice Commission, Report on the Independence of the Judicial System, Part I: The Independence of Judges, paras. 52-55; Committee of Ministers, Recommendation CM/Rec (2010)12, paras. 40; OSCE/ODIHR, Kyiv Recommendations on Judicial Independence in Eastern Europe, South Caucasus and Central Asia, Kyiv, 23-25 June 2010, para. 6, available at <https://www.osce.org/files/f/documents/a/3/73487.pdf>

<sup>97</sup>Funding of the Judiciary, ENCJ Report 2015-2016, p. 12-13

կարող են ներգրավվել դատարանների բյուջեի կազմման և դրա շուրջ քննարկումների գործընթացներին՝ դատարանների կարիքներից բխող գնահատում կատարելու և տեղեկացված որոշում կայացնելու համար բյուջեն նախագծող մարմիններին աջակցելու նպատակով:

Գնահատելու համար, թե որքանով է դատական համակարգի ֆինանսավորումը պատշաճ, անհրաժեշտ է գնահատել ֆինանսավորման՝ օրենքով նախատեսված չափանիշները (դրանց օբյեկտիվությունն ու թափանցիկությունը), դրանց հրապարակայնության աստիճանը և դրանց մշակման փուլում դատական համակարգի մասնակցայնությունը: Բացի դրանից՝ անհրաժեշտ է գնահատել բյուջեի կազմման և ընդունման գործընթացի թափանցիկությունն ու դատական բյուջեի հրապարակայնությունը, ինչպես նաև հասկանալ պետական բյուջեի կազմման չափորոշիչները, եթե այդպիսիք առկա են, և առաջնահերթությունների որոշման ընթացակարգը:

## 2.2 Բյուջեի պատրաստման մոդելներ

Դատական համակարգի բյուջեն պետք է բավարար լինի համակարգի բնականոն գործունեությունն ապահովելու և առաջադրվող նպատակներին հասնելու համար: Տրամադրվող բյուջեի՝ դատական համակարգի կարիքներին համապատասխան և բավարար լինելը պայմանավորված է նաև բյուջեի պատրաստման սկզբունքներով և բյուջեի կատարողականի գնահատման մոտեցումներով:

Դատական համակարգի բյուջեն պետական բյուջեի մի մասն է, և ըստ այդմ պայմանավորված է տվյալ երկրում բյուջեի կազմման ընտրված մոդելով և սկզբունքներով:

Ներկայումս աշխարհում պետական բյուջեի կազմման մի քանի մոդելներ են կիրառվում, այդ թվում՝ ծրագրային բյուջետավորում (program budgeting), զրոյացված բյուջետավորում (zero-based budgeting), արդյունքահեն/կատարողականի վրա հիմնված բյուջետավորում (performance-based budgeting) կամ այդ մոդելների համակցությունը<sup>98</sup>:

Վերջին տարիներին միջազգային ասպարեզում բյուջետավորման համակարգի բարեփոխումները միտված են պատմական տվյալներով պայմանավորված բյուջետային տողերով բյուջեից (երբ տարեց տարի նույն ծախսերն են ֆինանսավորվում՝ հաշվի առնելով նախորդ տարվա փորձը) անցմանը ծախսված միջոցներով ստացված արդյունքների գնահատման հիման վրա բյուջետավորմանը:

Որոշ երկրներ արդեն անցել են արդյունքներով պայմանավորված բյուջետավորմանը: Այս մոտեցման հիմնաքարերն են նպատակների սահմանումը, միջամտության ռազմավարությունների մշակումը և կոնկրետ արդյունքներին/թիրախներին հասնելու

---

<sup>98</sup>Ավելին՝ David Webber . Good Budgeting, Better Justice: Modern Budget Practices for the Judicial Sector . Law and development working paper series №3; Տե՛ս նաև STUDY on the Recent Practice of Funding the Judicial System, Taking into Account International Practices of Funding the Judicial System, CRJM, 2013.



վերաբերյալ հաշվետվությունների պատրաստումը<sup>99</sup>: Արդյունքները գնահատելու համար օգտագործվում են որակական և քանակական ցուցիչներ: Ցուցիչների միջոցով հնարավոր է գնահատել ծանրաբեռնվածությունը, հայտարարագրված նպատակին/թիրախին հասնելու համար ծախսված ռեսուրսների արդյունավետությունը, միջոցառումների նպատակահարմարությունը, արդյունքները, ինչպես նաև հիմնավորել բյուջետային հայտը: Այս մոդելի կիրառման համատեքստում գործընթացի մշտադիտարկումը և գնահատումը շատ կարևոր փուլեր են: Ստացված տեղեկությունները հնարավոր է օգտագործել տարբեր նպատակներով: Օրինակ՝ ապահովել ծախսված միջոցների վերաբերյալ հաշվետվողականությունը, բացահայտել առկա խնդիրները, բարեփոխումների կարիք ունեցող ոլորտները, ինչպես նաև գնահատել համակարգի արդյունավետությունն ու նախատեսվող միջոցառումների անհրաժեշտությունը:


Թեև այս մոդելի սկզբունքներն ընդհանուր են, եվրոպական երկրներում դատական համակարգին ֆինանսական հատկացումները որոշելիս տարբեր ցուցիչներ և չափորոշիչներ են կիրառվում: Օրինակ՝ ավարտված գործերի թիվը, ստացված գործերի թիվը, նախորդ տարիների տվյալները/կատարողականը, դատարանների կարիքները և այլն (Եվրամիության անդամ պետություններում դատական համակարգին հատկացվող բյուջեն որոշելիս կիրառվող չափորոշիչները ստորև */տե՛ս Պատկեր 1/*)<sup>100</sup>: Տարբեր են նաև չափորոշիչները սահմանող մարմինները՝ դատական համակարգ, արդարադատության նախարարություն (ԱՆ), խորհրդարան:

### **Պատկեր 1. Եվրամիության անդամ երկրներում դատական համակարգին հատկացվող բյուջեն որոշելիս կիրառվող չափորոշիչները**

---

<sup>99</sup> Sté u ավելին Performance Budgeting: A Users' Guide, policy brief, OECD, March 2008, available at <https://www.oecd.org/gov/budgeting/Performance-Budgeting-Guide.pdf>

<sup>100</sup> THE 2019 EU JUSTICE SCOREBOARD, Luxembourg: Publications Office of the European Union, 2019, p. 31, available at [https://ec.europa.eu/info/sites/info/files/justice\\_scoreboard\\_2019\\_en.pdf](https://ec.europa.eu/info/sites/info/files/justice_scoreboard_2019_en.pdf)



**Մեծ Բրիտանիայի** բյուջեն մի քանի մակարդակ ունի: Ամեն տարի որոշվում են հանրային քաղաքականության առաջնահերթությունները կամ ռազմավարական ուղղությունները, որոնց համար սահմանվում են գնահատման ենթակա թիրախներ: Համապատասխան պետական կառույցներ դրա հիման վրա մշակում են ընդհանուր թիրախներին և առաջնահերթություններին համապատասխանող գերատեսչական թիրախներ և այլն: Այդ թիրախները պետք է լինեն SMART չափանիշներին համապատասխան. հստակ (Specific), չափելի (Measurable), իրագործելի (Achievable), վերաբերելի (Relevant) և ունենան վերջնաժամկետ (Time-bound) (տե՛ս *Աղյուսակ 3*)<sup>101</sup>:

**Աղյուսակ 3. Բյուջետային ծրագրի ձևակերպումը Մեծ Բրիտանիայում /քաղվածք/**

<sup>101</sup>Տե՛ս ավելին David Webber, Good Budgeting, Better Justice: Modern Budget Practices for the Judicial Sector, Law and Development working papers series #3, p. 17, available at <http://documents1.worldbank.org/curated/fr/225991468167380812/pdf/394770LDWOP31BudgetPractices01PUBLIC1.pdf>

Ծրագիր. Ապահովել արդարադատության արդյունավետ իրականացումը	
Թիրախ	Գնահատման միջոցներ
<p>➤ Բարելավել արդարադատության իրականացումը՝ ավելացնելով այն հանցագործությունների թիվը, որոնց համար հանցագործություն կատարած անձինք հայտնվել են դատարանի առջև (1.15 մլն 2005-2006թթ. (1.125 մլն 2007-2008թթ.), ինչպես նաև կրճատելով ոչ արդյունավետ դատավարությունների թիվը:</p>	<p>- Բոլոր հանցագործությունների թիվը, որոնց համար հանցագործություն կատարած անձինք հայտնվել են դատարանի առջև</p> <p>- ոչ արդյունավետ դատավարությունների բաժնեմասը (նվազեցման նպատակ՝ 24%-ից 17% մինչև 2006թ.):</p>
<p>➤ Բարձրացնել քրեական արդարադատության հանդեպ վստահության մակարդակը, այդ թվում՝ էթնիկ փոքրամասնությունների կողմից, և տարեց տարի ապահովել տուժողների ու վկաների գոհունակության աճ՝ միննույն ժամանակ երաշխավորելով ամբաստանյալների իրավունքները:</p>	<p>- Հանրության վստահության մակարդակը՝ 2002-2003թթ. համեմատ</p> <p>- էթնիկ փոքրամասնությունների կողմից վստահության մակարդակը՝ 2002-2003թթ. համեմատ</p> <p>- տուժողների և վկաների գոհունակության մշտական աճ՝ թիրախ՝ 3%-ի աճ</p> <p>- ամբաստանյալների իրավունքները (ապացուցահեն):</p>

Կարևոր է նշել, որ համապատասխան բաժնի կողմից մշտապես իրականացվում է կենտրոնացված մշտադիտարկում և գնահատում: Բաժնի գործառույթներն են աջակցել համապատասխան մարմիններին հասնելու իրենց սահմանած նպատակներին, ինչպես նաև բացահայտել առկա խոչընդոտներն ու գնահատել խնդիրները:

**Ֆրանսիան** նույնպես հակված է արդյունքների հիման վրա բյուջետավորման մոդելին: Հիմնական ծրագիրը վերնագրված է «Արդարադատության իրականացում», իսկ ենթածրագրերը վերաբերում են տարբեր դատական ատյանների: Կիրառվող ցուցիչները միտված են համակարգի արդյունավետությունը գնահատելուն (տե՛ս *Աղյուսակ 4*)<sup>102</sup>:

#### Աղյուսակ 4. Բյուջետային ծրագրի ձևակերպումը Ֆրանսիայում

<sup>102</sup> Տե՛ս ավելին David Webber, Good Budgeting, Better Justice: Modern Budget Practices for the Judicial Sector, Law and Development working papers series #3, p. 24

Ծրագիր 1. Արդարադատության իրականացում (քաղաքացիական և քրեական)

Թիրախ	Ցուցիչ
➤ Կայացնել քրեական գործերով ժամկետում ղատավճիռներ որչամիտ որակյալ	- հանցագործությանն արձագանքման միջին ժամանակը - ազգային դատական ռեգիստրի կողմից մերժումների ցուցանիշը - դատախազների կողմից քննված քրեական գործերի թիվը - դատավորների կողմից քննված քրեական գործերի թիվը:
➤ Ամրապնդել և զանազանել արձագանքը հանցավորությանը	- ազատագրկմանն այլընտրանք հանդիսացող պատիժների կիրառման ցուցանիշը:
➤ Բարելավել քրեական գործերով դատավճիռների կատարումը	- կատարման ցուցանիշը - կատարման համար անհրաժեշտ միջին ժամանակը:
➤ Կառավարել քրեական գործերով դատական ծախսերի ավելացումը	- քրեական արդարադատության համակարգի կողմից արձագանք ստացած գործի միջին դատական ծախսը:
➤ Գրանցել դատական ակտերի ժամանակին	- դատական ակտի ստացման պահից մշակման համար անհրաժեշտ ժամանակահատվածը:

2005թ.-ից **Նիդերլանդներում**<sup>103</sup> կիրառվում է դատական համակարգի արդյունքահեն ֆինանսավորումը: Բյուջեն քննարկվում է երկու փուլով: Նախ, ԱՆ-ն, Դատական խորհրդի հետ քննարկելուց հետո, երեք տարվա կտրվածքով որոշում է 10 տեսակի գործերի միջինացված արժեքը և յուրաքանչյուր տարի Դատական խորհրդի հետ քննարկում է հաջորդ տարվա ընթացքում ավարտված դատական գործերի կանխատեսվող թիվը: Կոնկրետ տեսակի գործի արժեքը որոշվում է՝ հաշվի առնելով գործն ավարտելու համար դատավորների և աշխատակազմի կողմից ծախսված ժամանակը՝ բազմապատկած յուրաքանչյուր բոլորի համար սահմանված արժեքով: Ավարտված գործերի կանխատեսվող քանակը որոշվում է Դատական խորհրդի կողմից յուրաքանչյուր տարի՝ հաշվի առնելով դատարանների արդյունքները և

<sup>103</sup> Ավելի մանրամաս տե՛ս The Financing System of the Netherlands Judiciary, Council for the Judiciary, available at <https://www.rechtspraak.nl/SiteCollectionDocuments/The-Financing-System-of-the-Netherlands-Judiciary.pdf>

կանխատեսումները/միտումները: Նույն տեսակի գործի համար բոլոր դատարանները ստանում են նույն գումարը, սակայն տարբերվում է կանխատեսվող գործերի քանակը, հետևաբար, նաև դատարանին հատկացվող ընդհանուր բյուջեն: Այսինքն, որքան շատ գործեր են քննվել դատարանի կողմից, այդքան շատ միջոցներ այդ դատարանը կստանա հաջորդ տարի:

**Ֆինլանդիայում**<sup>104</sup> Ֆինանսների նախարարությունն ԱՆ-ի հետ քննարկելուց հետո որոշում է բյուջետային շրջանակը: Այդ շրջանակի սահմաններում ԱՆ-ն որոշում է հատկացվող բյուջեի չափը: Նախարարության կազմում գործող Դատարանների կառավարման վարչությունը (Department of Judicial Administration) պատասխանատու է դատարանների նախագահների հետ քննարկումների համար: Հատկանշական է, որ դատական բյուջեի 80%-ը կազմում են աշխատավարձերը, և քննարկումներն ընթանում են դատավորների ու աշխատակազմի թվի, այդ թվում՝ լրացուցիչ դատավորներ և աշխատակազմ ներգրավելու հարցի շուրջ: Քննարկվում են նաև դատարանի արդյունավետությունը, թիրախներին հասնելու կատարողականը, ինչպես նաև կանխատեսվող գործերի քանակը: Հաշվի առնելով վերը նշված բյուջետային շրջանակով պայմանավորված բյուջեն՝ յուրաքանչյուր դատարան սահմանում է այն գործերի քանակը, որը հնարավոր է ավարտել տրամադրված միջոցներով: Այսինքն, Ֆինլանդիայում ոչ թե բյուջեն է պայմանավորված ավարտված գործերի քանակով, այլ ավարտված գործերի քանակը և մյուս թիրախները՝ հատկացված բյուջեով: Շատ կարևոր է ընդգծել, որ թիրախների չափահավման դեպքում քննարկվում է լրացուցիչ ռեսուրսների տրամադրման անհրաժեշտությունը, այսինքն՝ ավելի ցածր արդյունքներ ցույց տված դատարանը հնարավոր է ստանա ավելի շատ միջոցներ, որպեսզի բարելավի աշխատանքները՝ ելնելով այն սկզբունքից, որ բոլորը հավասար են, և քաղաքացիները չպետք է տուժեն նվազ արդյունավետ աշխատող դատարանների պատճառով:

### 2.3 Մասնակցությունը բյուջեի պատրաստման, քննարկման և տնօրինման գործընթացներին ՀՀ-ում

ՀՀ սահմանադրության 175-րդ հոդվածով ամրագրված ԲԴԽ լիազորություններից է հաստատել իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնել Կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար: ՀՀ դատական օրենսգիրքը սահմանում է, որ դատարանների և ԲԴԽ ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեից՝ յուրաքանչյուր դատարանի և ԲԴԽ համար առանձին տողով: Ըստ ՀՀ դատական օրենսգրքի՝ ԲԴԽ-ն հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները, կառավարությանն է ներկայացնում իր և դատարանների բյուջետային հայտը

<sup>104</sup> Ավելին տե՛ս Federica Viapiana, Funding the Judiciary: How Budgeting System Shapes Justice. A Comparative Analysis of Three Case Studies, International Journal for Court Administration, Vol. 9, No. 3, Winter 2019, ISSN 2156-7964, pp. 23-33, available at <http://www.iacajournal.org>

պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար, հաստատում է իր և դատարանների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և սահմանված կարգով ներկայացնում է կառավարությանը<sup>105</sup>:

Դատարանների և ԲԴԽ ֆինանսավորումը պետք է իրականացվի այնպես, որ ապահովվեն դրանց բնականոն գործունեության համար անհրաժեշտ ծախսերը<sup>106</sup>: Այս դրույթն արտացոլված է ՀՀ տարեկան բյուջեի մասին օրենքներում, որոնք կքննարկվեն ստորև:

Դատարանների և ԲԴԽ միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և բյուջետային հայտի նախագիծը նախապատրաստում է Դատական ղեկարտամենտի կենտրոնական մարմինը<sup>107</sup>, դատարանների աշխատակազմերից ստացված հայտերի հիման վրա, և այն ներկայացնում ԲԴԽ-ի հաստատմանը: Անհրաժեշտության դեպքում ԲԴԽ-ն կարող է դիտարկումներով հետ ուղարկել հայտը՝ համապատասխան փոփոխություններ, շտկումներ կատարելու նպատակով: ԲԴԽ կողմից հաստատած բյուջետային հայտը և միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ներկայացվում են ՀՀ կառավարությանը՝ ըստ բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշմամբ սահմանված ժամկետների<sup>108</sup>:

## **Գծապատկեր 2. Դատական համակարգի բյուջեի պատրաստման ցիկլը**


---

<sup>105</sup>Դատական օրենսգիրք, հոդված 89, 1-ին մաս:

<sup>106</sup>Դատական օրենսգիրք, հոդված 38, 1-ին և 2-րդ մասեր

<sup>107</sup>ԲԴԽ-ի կողմից իր լիազորությունները պատշաճ իրականացնելու համար ստեղծվել է ԲԴԽ աշխատակազմ՝ դատական ղեկարտամենտ: Դատական ղեկարտամենտն ապահովում է ԲԴԽ, դատարանների, դատավորների ընդհանուր ժողովի և դրա հանձնաժողովների գործունեությունը, ինչպես նաև քաղաքացիական, գանձապետական համակարգի, գնումների, ֆինանսատնտեսական և այլ գույքային իրավահարաբերություններին նշված մարմինների մասնակցությունը:

<sup>108</sup>Նույն տեղում, հոդված 38, 4-6-րդ մասեր: Տե՛ս նաև Մեթո դականցուցումներ ՀՀ 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման շրջանակներում պետական մարմինների բյուջետային հայտերի կազմման և դրանք հի ֆինանսների նախարարություն ներկայացման, հասանելի է <http://scs.am/files/metodakan-cucumner-19-21.pdf>



Ինչպես տեսնում ենք, բյուջեի հայտի կազմման համար նախատեսված ժամկետները բավականին սուղ են: Դատական համակարգի բյուջեի դեպքում իրավիճակը բարդանում է նաև ներգրավված սուբյեկտերի առանձնահատկություններով, այդ թվում հաշվի առնելով նաև ԲԴԽ կողմից որոշումների ընդունման մեխանիզմը: Դատական դեպարտամենտը, հունվար ամսվա երկրորդ կեսին ստանալով բյուջեի կազմման ցուցումները, դրանք ուղարկում է դատարաններում գործող առանձնացված ստորաբաժանումներին, որոնք պետք է իրենց կարիքների հիման վրա կազմեն դատարանի բյուջեի հայտը: Ժամանակի կորստից խուսափելու նպատակով դատարանի հայտը մինչև կազմվելը քննարկվում է դատարանի աշխատակազմի ղեկավարի հետ: Մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 8-ը դատարաններն ուղարկում են իրենց հայտերի նախագծերը Դատական դեպարտամենտ: Ժամանակի սղության պատճառով Դատական դեպարտամենտը հնարավորություն չի ունենում դիտարկումներով և առաջարկություններով հայտի նախագիծը հետ ուղարկել դատարաններ՝ լրամշակման: Այսինքն՝ անհրաժեշտության դեպքում Դատական դեպարտամենտն ինքն է լրամշակում հայտը, ավելացում կամ նվազեցնում այն՝ այդ թվում նաև հաշվի առնելով իրավական ակտերով կատարված փոփոխությունները, որոնք կարող են ազդել բյուջեի չափի վրա: Հայտում ներառվում են նաև ԲԴԽ և Դատական դեպարտամենտի ծախսերը, և ամբողջական հայտը ներկայացվում է ԲԴԽ-ին՝ քննարկման ու հաստատման: ԲԴԽ-ն կարող է առարկություններով և/կամ առաջարկություններով հետ ուղարկել հայտը: Դատական դեպարտամենտը լրամշակում է հայտը և կրկին ներկայացնում

ԲԴԽ-ին: Հաշվի առնելով, որ նախորդ տարվա գործունեությունը պետք է ամփոփվի և բյուջեի հայտը պետք է հաստատվի մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 1-ը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ԲԴԽ նիստերը շաբաթական երկու անգամ են հրավիրվում՝ ակնհայտ է, որ Դատական դեպարտամենտը ստիպված գործում է ցայտնոտայի պայմաններում:

Բյուջեի հայտի մանրամասն վերծանումը պատրաստվում է դատարանների աշխատակազմերի կողմից (վերջիններս Դատական դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումներն են), որի հիման վրա Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմինը պատրաստում է դատական համակարգի միասնական բյուջեի հայտ: Ըստ դատական դեպարտամենտի՝ ՀՀ դատարանների կողմից ներկայացվող բյուջետային հայտերը կարող են փոփոխվել տարբեր պատճառներով, մասնավորապես՝ մեխանիկական թվային սխալների կամ վրիպակների ուղղման, նորմատիվ իրավական ակտերի պահանջների ոչ լրիվ պահպանման, որևէ ծախսային հոդվածի՝ նախատեսված անհրաժեշտից ավել կամ պակաս պլանավորելու դեպքերում և այլն<sup>109</sup>:

Համաձայն Դատական դեպարտամենտի կողմից տրամադրած տվյալների՝ ԲԴԽ անդամները, դատարանների նախագահները, ինչպես նաև դատարանի աշխատակազմի ղեկավարները չեն անցնում մասնագիտական վերապատրաստում բյուջեի պատրաստման և տնօրինման թեմայով<sup>110</sup>:

Գործնականում յուրաքանչյուր դատարան պատրաստում է բյուջեի հայտը տրամադրված ձևաթղթերում՝ excel ձևաչափով: Հայտը ներառում է դատարանների բնականոն գործունեության համար անհրաժեշտ ծախսերը, այդ թվում՝ ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր: Ընթացիկ ծախսերը ներառում են՝

- Դատավորների, ինքնավար, վարչական, հայեցողական պաշտոններ զբաղեցնողների, դատական ծառայողների, տեխնիկական աշխատակազմի, կարգադրիչների աշխատավարձերը, ներառյալ՝ հավելավճարները և պարգևավճարները;
- Տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով տարվա ընթացքում նախատեսվող ծախսերը, ներառյալ՝ էներգետիկ, կոմունալ, կապի, վարչական, համակարգչային, տեղեկատվական, կառավարչական ծառայություններ, ապահովագրական, ներկայացուցչական ծախսեր, ընդհանուր բնույթի այլ ծառայություններ, մասնագիտական ծառայություններ, շենքերի և կառույցների, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում, գրասենյակային նյութեր և հագուստ, տրանսպորտային նյութեր /բենզին,յուղեր,այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար/, կենցաղային և հանրային սննդի նյութեր /մաքրող նյութեր, հիգիենիկ նյութեր, սնունդ և ըմպելիք/,

---

<sup>109</sup>ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի թիվ ԴԴ-1 Ե3145 առ 29 ապրիլի 2020թ. գրություն



հատուկ նպատակային այլ նյութեր (հիմնականում էլեկտրոնայուն սարքավորումների համար), պարտադիր վճարներ, շենքերի և շինությունների կառուցում, վարչական սարքավորումներ, նախագծահետազոտական ծախսեր, ոչ նյութական հիմնական միջոցներ<sup>111</sup>, ծառայողական գործուղումների գծով ծախսեր:

Բյուջեի հայտը նաև ներառում է պահուստային ֆոնդ, որը հավասար է դատական համակարգին տրամադրվող բյուջեի 2%-ին:

Միասնական հայտը ներառում է վերծանում՝ ըստ դատարանների, ըստ ծախսերի, ինչպես նաև պետական բյուջեի կառուցվածքին համապատասխան՝ ըստ ծրագրի ու միջոցառումների: Բյուջեի հայտում նշված են տվյալներ ինչպես նախորդ երկու տարվա, այնպես էլ առաջիկա երկու տարվա համար: Մա թույլ է տալիս հետևել ծախսերի շարժին՝ ըստ դատարանների: Պարզ չէ, սակայն, թե տարվա բյուջեն մշակելիս որքանով են հաշվի առնվում նախորդ տարվա փաստացի ծախսերը, քաղած դասերը և կատարողականը, քանի որ բացակայում են ցուցիչները և գնահատման մեխանիզմը:

Բացի ծախսերի վերծանումից, Դատական դեպարտամենտը մշակում է պահանջված միջոցների համար հիմնավորում, որը ներկայացվում է ըստ բյուջետային տողերի՝ կից փաստաթղթերով: Ներկայացված հիմնավորումը նույնպես չի պարունակում գործունեության գնահատման որևէ ցուցիչ, ինչպես նաև ոչ բոլոր ծախսերի համար են ներկայացված պատշաճ և թափանցիկ հիմնավորումներ:

Բյուջեի պատրաստման գործընթացի թափանցիկության ապահովման առումով ողջունելի է 2020թ. դատական բյուջեի հայտի նախագիծը Դատական դեպարտամենտի կողմից հանրային քննարկման ներկայացնելը<sup>112</sup>:

Կառավարությունն ընդունում է բյուջետային հայտը և ընդգրկում այն պետական բյուջեի նախագծում: Եթե կառավարությունն ունենում է առարկություններ, բյուջետային հայտը նախագծի հետ ներկայացվում է ԱԺ՝ բյուջետային հայտի վերաբերյալ առարկությունների մանրամասն հիմնավորումներով: Փաստաթղթերի այս փաթեթն ուղարկվում է նաև ԲԴԽ: Այսինքն, de jure ԲԴԽ-ն ունի ոչ միայն ակտիվ մասնակցություն, այլ նաև վճռորոշ դեր դատական համակարգի բյուջեն նախապատրաստելու փուլում, սակայն գործնականում չունի իրական ազդեցություն այն նույնչափ հաստատված լինելու առումով:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ՀՀ օրենսդրությամբ դատարաններին և ԲԴԽ-ին դատական իշխանության բյուջեի նախագծի ձևավորման ողջ գործընթացում էական

<sup>111</sup>Ոչ նյութական հիմնական միջոցներ առկա էին միայն ԲԴԽ բյուջեում

<sup>112</sup> Դատական իշխանության բյուջետային հայտի նախագծի հանրային քննարկում, 12.06.2019թ., հասանելի է <https://court.am/hy/news/185>

դերակատարում է վերապահված և նախատեսված մեխանիզմը համապատասխանում է միջազգային չափանիշներին: Ավելին, դատական իշխանության բյուջեն ոչ միայն կազմվում և ներկայացվում է Կառավարությանը դատարանների ու ԲԴԽ բյուջետային հայտերի հիման վրա, այլև ԲԴԽ-ն իրավասու է ներկայացնելու իր դիրքորոշումը և անհրաժեշտ ծախսերի հիմնավորվածությունն ԱԺ-ում տարեկան պետական բյուջեի քննարկման շրջանակներում, ինչով ապահովվում է դատական իշխանության ինքնակառավարման մարմնի ու խորհրդարանի միջև ուղիղ քննարկումների հնարավորությունը: ԱԺ-ում ԲԴԽ-ի դիրքորոշումը բյուջետային հայտի կամ միջնաժամկետ ծախսերի ծրագրի վերաբերյալ ներկայացնում է ԲԴԽ նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ Դատական դեպարտամենտի ղեկավարը<sup>113</sup>:

Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվել է, ներկայացվող ու ԱԺ կողմից հաստատվող բյուջեի համեմատական վերլուծությունը, մասնավորապես՝ կրճատումները, ցույց է տալիս, որ դատական համակարգը իրական ազդեցություն չունի բյուջեի չափի վերջնական որոշման վրա, և ԱԺ-ն հիմք է ընդունում գործադիր իշխանության դիրքորոշումը:

ԱԺ կողմից հաստատված բյուջեի հիման վրա Կառավարության որոշմամբ հաստատվում են բյուջետային հատկացումներ՝ եռամսյակային և տարեկան<sup>114</sup>: Հատկացումները նշված են ըստ ծրագրի և միջոցառումների համար նախատեսված բյուջետային տողերի: Բոլոր միջոցառումների կատարողն է Դատական դեպարտամենտը: Բոլոր ծախսերը դասված են որպես ընթացիկ և ներառում են՝

- Աշխատանքի վարձատրություն (աշխատավարձեր և հավելավճարներ, պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ, քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում)։
- Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում՝ շարունակական ծախսեր (էներգետիկ, կոմունալ և կապի ծառայություններ, ապահովագրական ծախսեր); ծառայողական գործուղումների գծով ծախսեր (ներքին գործուղումներ, արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր); պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում (համակարգչային, տեղեկատվական, ներկայացուցչական ծախսեր, ընդհանուր բնույթի այլ ծառայություններ), այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում, ընթացիկ նորոգում և պահպանում շենքերի և մեքենաների համար; նյութեր և ապրանքներ (գրասենյակային նյութեր և հագուստ, տրանսպորտային նյութեր)։
- Մոցիալական նպաստներ և կենսաթոշակներ։
- Այլ ծախսեր՝ հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ:


<sup>113</sup> ՀՀ դատական օրենսգիրք, հոդված 38, 7-րդ մաս:

<sup>114</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 28-ի թիվ 1515-Ն և 2019 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշումների 4-րդ հավելվածները

2019թ. դատական համակարգին տրամադրած բյուջեի՝ 12 380 667 600 ՀՀ դրամի զգալի մասը՝ 10 044 237.8 ՀՀ դրամ (81%), կազմել է աշխատանքի վարձատրությունը: Գործնականում 2019թ. դատական համակարգի կատարողականը ներկայացնելիս<sup>115</sup> Դատական դեպարտամենտի ղեկավարը հայտնել է, որ բյուջեի 87.8%-ը աշխատանքի վարձատրությունն է կազմել: Ընդ որում, դատավորների վարձատրության չափը սահմանվում է օրենքով: Սա նշանակում է, որ գործնականում դատարաններն ունեն սահմանափակ ճկունություն իրենց ընթացիկ ծախսերը որոշելու հարցում, քանի որ առանց Կառավարության համաձայնության չեն կարող, օրինակ, ավելացնել դատավորների թիվը և դրանով պայմանավորված բյուջեի ավելացում հայցեն և այլն:

Ստորև ներկայացնում ենք ԵՄ երկրների կողմից տրամադրվող միջոցների պատկերը՝ ըստ բաղադրիչների (տե՛ս Պատկեր 3):

**Պատկեր 3. 2017 թ. ԵՄ երկրների կողմից տրամադրվող միջոցների բացվածքը՝ ըստ բաղադրիչների<sup>116</sup>**



<sup>115</sup> Քննարկումը հասանելի է <https://www.youtube.com/watch?app=desktop&feature=youtu.be&v=2l78iklR4wQ>

<sup>116</sup> THE 2019 EU JUSTICE SCOREBOARD, Luxembourg: Publications Office of the European Union, 2019, p. 32, available at [https://ec.europa.eu/info/sites/info/files/justice\\_scoreboard\\_2019\\_en.pdf](https://ec.europa.eu/info/sites/info/files/justice_scoreboard_2019_en.pdf)

Մնացած ծախսերի հաշվարկը նախապատրաստելիս կիրառվում են տարբեր մեթոդներ, որոնց մի մասը պայմանավորված է օբյեկտիվ պատճառներով, մյուսը՝ որակով:

Որոշ ընթացիկ ծախսեր հաշվարկելիս դատական համակարգը կաշկանդված է ենթաօրենսդրական ակտերով: Օրինակ, կոմունալ ծախսերը հաշվարկվում են հիմք ընդունելով Կառավարության 28.04.2005 թվականի «ՀՀ պետական բյուջեի նախագծում ՀՀ պետական մարմինների գծով բյուջետային ծախսերի առանձին տեսակների՝ ջեռուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ձեռքբերման ծավալների հաշվարկման հիմքում դրվող նորմաները հաստատելու մասին» N629-Ն որոշումը և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համապատասխան որոշումները:

2020թ. բյուջեի հայտում *վարչական ծառայություններ* տողով նախատեսված բյուջեն պատրաստելիս հաշվի են առնվել 2018թ. փաստացի ծախսերը /թարգմանիչների դեպքում/, ինչպես նաև օրենսդրության փոփոխության արդյունքում առաջացած պարտավորությունները /2018թ. ապրիլի 9-ից ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի համաձայն՝ տեսողական խանգարումներ ունեցող անձանց համար դատական ակտերի հասանելիությունը մատչելի եղանակով ապահովման պահանջ/: Ըստ բյուջեի հիմնավորման՝ նշված ծառայության գինը, սակայն, բյուջետավորվել է ծառայություն մատուցողից բանավոր հարցման հիման վրա:

*Կառավարչական ծախսերը* /վկաներին և փորձագետներին վարձատրելու համար/ հաշվարկելիս հիմք է ընդունվել վերջին երկու տարիներին դատավարություններում ընդգրկված վկաների և փորձագետների վարձատրությանն ուղղված միջոցների դրամարկղային ծախսը՝ աճի միտման պահպանմամբ:

2020թ. *փոստային ծառայությունների* ձեռքբերման ծախսերի հաշվարկը կատարվել է հետևյալ բանաձևով՝ 1 գործի համար փոստային ծառայությունների միջին արժեք /2800 ՀՀ դրամ/ x գործերի քանակ: 2020թ. փոստային ծառայությունների ձեռքբերման համար գումարը պլանավորելիս հաշվի են առնվել 2018թ. փաստացի ծախսերը, 2020թ. գործերի քանակի կանխատեսվող աճը, ինչպես նաև 27.02.2018թ.-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջը: 2020-2022թթ. էլեկտրոնային արդարադատության ներդրմամբ պայմանավորված 2021 և 2022թթ. դատական համակարգը կանխատեսում էր փոստային ծառայությունների գծով ծախսերի զգալի տնտեսում, սակայն, ինչպես արդեն նշվել է, համակարգի ներդրման համար գումարը չի հաստատվել:

*Արտասահմանյան գործուղումներ* հոդվածով ծախսերը հաշվարկելիս գնահատվել է տվյալ տարվա համար նախատեսված համապատասխան ոլորտի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության, փորձի փոխանակման, ինչպես նաև տարբեր սեմինարներին մասնակցելու համար անհրաժեշտ միջոցների կարիքը: Հիմնավորման

մեջ ընդամենը նշվում են 2018թ. տեղի ունեցած միջոցառումները և թվարկվում են այն միջազգային մարմինները, որոնց հետ առկա է համագործակցություն: Ընդ որում, նշված կազմակերպությունները ՀՀ-ից դուրս կազմակերպվող միջոցառումներին հրավիրելիս հոգում են մասնակիցների ծախսերը: Այս տողով ծախս նախատեսելիս փաստորեն հաշվի չի առնվել նախկին փորձը՝ չեն նշվել բացահայտված կարիքները, ոչ էլ հիմնավորվել է նոր ծախսի անհրաժեշտությունը: Դատական դեպարտամենտի կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2019թ. *Արտասահմանյան գործուղումներ* հոդվածով բյուջետային հայտով գումար նախատեսվել է, սակայն չի հատկացվել: Ավելին, դատական համակարգին բյուջետաին հատկացումների տնտեսագիտական դասակարգման հոդվածներով հատկացված դրամական միջոցների հաշվին 2019թ. դատական համակարգից որևէ անձ արտասահման չի գործուղվել: 2020թ. գործուղումների համար գումար նախատեսվել և տրամադրվել է, սակայն, հաշվի առնելով կորոնավիրուսի համավարակով ստեղծված իրավիճակը, գումարը գրեթե չի ծախսվել:

*Տրանսպորտային ծախսերը* ֆիքսված են և հաշվարկվում են Կառավարության որոշման հիման վրա:

*Բնակարանների վարձակալության գումար՝* մշտական բնակության վայրից դուրս աշխատող դատավորների համար նախատեսված ծախսի հիմքում դրվում է առկա կարիքը, իսկ փոփոխության դեպքում բյուջեն վերաբաշխվում է:

Ի տարբերություն այլ տողերի, *Գրասենյակային նյութեր և հագուստ* տողով նախատեսված գրենական պիտույքների համար նշված չեն ծախսի հիմք հանդիսացած տվյալները: Միայն նշված է, որ 2020թ. համար գրասենյակային պիտույքների ձեռքբերման համար նախատեսված ծախսերի հաշվարկը կատարվել է՝ հաշվի առնելով համապատասխան դատական գործերի քանակի կանխատեսվող աճը:

Հակառակ միջազգային մասնագիտացված կառույցների կողմից մշակված սկզբունքների՝ ՀՀ-ում դատական համակարգին տրամադրվող բյուջեն չի ներառում դատավորների վերապատրաստման համար ծախսեր: Ավելին, ԲԴԽ-ն չունի ինստիտուցիոնալ որևէ կապ Արդարադատության ակադեմիայի հետ, ներգրավված չէ դատավորների թեկնածուների հավակնորդների ու դատավորների ուսումնական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ քննարկումներին՝ ի ապահովումն դատական իշխանության կարիքներին համահունչ ֆինանսավորման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է եզրահանգել, որ մի կողմից, ՀՀ օրենսդրությունը համապատասխանում է միջազգային չափանիշներին՝ դատական համակարգի՝ բյուջեի բոլոր փուլերում մասնակցության ապահովման առումով, մյուս կողմից՝ գործնականում դատական համակարգը փաստացի ազդեցություն չունի վերջնական հաստատվող բյուջեի վրա՝ անկախ կարիքների հիմնավորվածությունից և այլ գործոններից: Դատական համակարգին տրամադրվող

բյուջեն, որի զգալի մասը՝ 81%-ը կազմում է վարձատրությունը, հիմնականում կազմվում է ֆիքսված գործունեների հիման վրա, իսկ այն ծախսերը, որտեղ դատական համակարգը կարող էր ազդեցություն ունենալ բյուջեի ավելացման առումով, չեն հաստատվում՝ Կառավարության դիրքորոշման հիման վրա:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դատական համակարգին պետք է տրամադրվի առանձին, բավարար և պատշաճ բյուջե՝ որպես դրա բնականոն գործունեության գրավական, ինչը թույլ կտա ապահովել ՄԻԵԿ 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների պահպանումը:

ՀՀ օրենսդրությունն ընդհանուր առմամբ ամրագրում է դատական անկախության ապահովման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքներ: Այնուամենայնիվ, նորմերի և իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը թույլ են տալիս վերհանել մի շարք բացեր:

Առանձին բյուջե ապահովելու առումով թեև ՀՀ օրենսդրությունը համապատասխանում է միջազգային չափանիշներին, բյուջեի բավարար լինելու տեսանկյունից առկա են խնդիրներ, այդ թվում նաև այն պատճառով, որ դատական համակարգի կողմից բացահայտված կարիքները հիմնականում պատշաճ արձագանք չեն ստանում:

Մասնավորապես, 2015-2021թթ. տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև բացարձակ թվերի առումով դատական համակարգին հատկացված բյուջեն որոշ չափով ավելացել է, պետական բյուջեի՝ դատական համակարգին հատկացվող մասնաբաժինը նվազման կայուն միտում է գրանցում՝ 0.81-ից մինչև 0.66 տոկոս: 2021թ.-ին Հայաստանի դատական համակարգին տրամադրված բյուջեն կազմում է պետական բյուջեի ծախսերի մոտ 0.66%-ը, որը զգալիորեն ցածր է վերը նշված ՄԱԿ-ի զեկուցողի կողմից խորհուրդ տրվող չափից: Պետք է ընդգծել, որ 2021թ. առաջին անգամ վերջին տարիների ընթացքում արձանագրվել է դատական համակարգին տրամադրվող բյուջեի ոչ թե ավելացում, այլ կրճատում, չնայած արձանագրված կարիքների՝ 2020թ. համեմատ այն կրճատվել է 497 023.1 հազար դրամով: Նվազել է նաև մեկ շնչի հաշվարկով դատական համակարգին տրամադրվող գումարը՝ շարունակելով վերջին տարիների միտումը:

Բավարար ռեսուրսները պետք է ներառեն դատական համակարգի անկախության, արժանապատվության և արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ շենքային պայմաններ, դատական ու վարչական աշխատակազմ, ընթացիկ ծախսերի համար բյուջե, ինչպես նաև դատավորների պատշաճ վարձատրություն: Թվարկվածները դատական իշխանության անկախությունը երաշխավորելու, դատական համակարգի բնականոն գործունեությունն ապահովելու և պատշաճ որակի արդարադատություն մատուցելու գրավականներից են, սակայն անհրաժեշտ միջոցներ պետական բյուջեից չեն տրամադրվում, հատկապես վերանորոգման և կապիտալ շինարարության համար:

ՀՀ-ում դեռևս առկա են դատարանների կամ դրանց նստավայրերի վարչական շենքերի համար ոչ բավարար տարածք ունենալու կամ այլ պետական մարմինների նստավայրերից պատշաճ կերպով սահմանագատված չլինելու, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի չլինելու խնդիրները: Կառավարությունը փաստում է, որ որոշ դատարանների շենքեր նաև ապահովված չեն նվազագույն անհրաժեշտ պայմաններով՝ դատական նիստերի դահլիճներով, բաց և փակ գոտիներ ստեղծելու հնարավորությամբ և այլն: Արդյունքում, դատական համակարգի կողմից տրամադրվող ծառայությունը մատչելի, հասանելի և որակով չէ, իսկ արդարադատության մատուցման պայմանները՝ ոչ արժանապատիվ:

Ինչպես ցույց է տալիս ԲԴԽ կողմից պատրաստված բյուջեի հայտը և ԱԺ կողմից հաստատված բյուջեի վերլուծությունը, չնայած դատական համակարգի կողմից բացահայտված և հիմնավորված կարիքների՝ հաստատվում է ծախսերի նվազագույնը, որի գրեթե 90 տոկոսը կազմում է վարձատրությունը:

Նշենք, որ դատարանները շարունակում են լինել ծանրաբեռնված, գործերի թիվն աճում է, իսկ դատավորների քանակը, բացառությամբ 2021թ. փոփոխությունների, ոչ: Չի բարձրանում նաև դատավորների վարձատրության չափը: Ավելին, այն չի վերանայվում: Այս հարցը դառնում է ավելի խնդրահարույց նույն գործակից ունեցող գործադիր իշխանության ներկայացուցիչների պարզևատրումների միջոցով վարձատրության զգալի ավելացման համատեքստում, իսկ որոշակի խմբերի պաշտոնատար անձանց վարձատրության գործակցի հավասարեցումը թույլ չի տալիս պատշաճ կերպով հաշվի առնել դատավորի անհատական պատասխանատվությունը և աշխատանքի բնույթն ու առանձնահատկությունները: Առկա է կոնսենսուս, որ ներկայումս դատավորների և նրանց աշխատակազմերի վարձատրությունը համարժեք չէ նրանց ծանրաբեռնվածությանը. աճել է չավարտված գործերի թիվը և գործերի ավարտելու համար անհրաժեշտ ժամանակը՝ պայմանավորված դատական գործերի թվի աճով և դատավորների անփոփոխ թվով:

Այս միտումները ոչ միայն վտանգում են դատարանների անաչառությունը և ստեղծում են կոռուպցիոն ռիսկեր, այլև առաջատար իրավաբանների համար դատական համակարգը մնում է ոչ գրավիչ:

Արդյունքում, օրակարգային է մնում դատական համակարգ որակյալ կադրեր ներգրավելու խնդիրը: Կարևոր է արձանագրել նաև, որ դատավորների թվի ավելացումն ինքնին բավարար չէ, քանի որ պահանջվելու է նաև աշխատակազմի թվի ավելացում, շենքային պայմանների համապատասխանեցում:

Ինչ վերաբերում է դատական համակարգի ներգրավվածությանը, ապա ՀՀ օրենսդրությամբ դատարաններին և ԲԴԽ-ին դատական իշխանության բյուջեի նախագծի ձևավորման ողջ գործընթացում էական դերակատարում է վերապահված, և նախատեսված մեխանիզմը

համապատասխանում է միջազգային չափանիշներին: Ավելին, դատական իշխանության բյուջեն ոչ միայն կազմվում և ներկայացվում է Կառավարությանը դատարանների ու ԲԴԽ բյուջետային հայտերի հիման վրա, այլև ԲԴԽ-ն իրավասու է ԱԺ-ում տարեկան պետական բյուջեի քննարկման շրջանակներում ներկայացնելու իր դիրքորոշումը և անհրաժեշտ ծախսերի հիմնավորվածությունը, ինչով ապահովվում է դատական իշխանության ինքնակառավարման մարմնի ու խորհրդարանի միջև ուղիղ քննարկումների հնարավորությունը: ԱԺ-ում ԲԴԽ-ի դիրքորոշումը բյուջետային հայտի կամ միջնաժամկետ ծախսերի ծրագրի վերաբերյալ ներկայացնում է ԲԴԽ նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ Դատական դեպարտամենտի ղեկավարը:

Այնուամենայնիվ, բյուջեի պլանավորումը տեղի չի ունենում դատական համակարգի ու Կառավարության միջև համագործակցության ու պատշաճ համակարգման պայմաններում, ակնհայտ է բանավոր պայմանավորվածությունների, հաստատված ծրագրերի և փաստացի իրավիճակի միջև դիսոնանսը: Բյուջեի հայտի պատրաստումը տեղի է ունենում համապատասխան և անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների բացակայության պայմաններում, ինչի հետևանքով կատարվում է անհարկի աշխատանք՝ սուղ ժամկետների պայմաններում: Մյուս կողմից, դատական համակարգի կողմից արվող առաջարկությունները մերժվում են՝ օրենսդրական հիմքի բացակայության և ժամանակին չփոփոխման պատճառով: Կառավարության և դատական համակարգի միջև տարաձայնությունների դեպքում ԱԺ-ն հիմք է ընդունում Կառավարության դիրքորոշումը: Արդյունքում դատական համակարգը չի ստանում բավարար ռեսուրսներ բացահայտված կարիքները հոգալու, արժանապատիվ պայմաններում և իրատեսական ծանրաբեռնվածությամբ արդարադատություն իրականացնելու համար:

Բյուջեի պլանավորումը և հաստատումը կատարվում է առանց նախորդ տարվա կատարված աշխատանքի արդյունավետության բովանդակային գնահատման: Բյուջեի ծրագրի գնահատումը կատարվում է ոչ ֆինանսական ցուցիչների հիման վրա, չի բացահայտվում, թե ինչ է անհրաժեշտ դատական համակարգի բնականոն գործունեության և արդյունավետության բարձրացման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ արձանագրում ենք, որ առանձին բյուջե ունենալու պայմաններում ՀՀ դատական համակարգին չի տրամադրում բավարար բյուջե՝

- դատարանների շենքային պայմանների բարելավման համար.
- դատավորների թվի ավելացման համար.
- դատավորների՝ պաշտոնին համաատասխան, արժանապատիվ վարձատրության ապահովման համար.
- Նյութատեխնիկական, այդ թվում՝ ծրագրային ապահովվածության երաշխավորման համար:



## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՀՀ կառավարություն՝

- Ապահովել բավարար բյուջե՝ դատական իշխանության կողմից բացահայտված և առաջնահերթ համարվող կարիքները հոգալու համար, այդ թվում՝ բնականոն գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ շենքային պայմաններն ապահովելու համար,
- Ապահովել պատշաճ քննարկումներ բյուջեի կազմմանը նախորդող ժամանակահատվածում՝ ապահովելու դատական համակարգի կարիքների ֆինանսավորման ապահովման համար անհրաժեշտ միջոցառումները, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում օրենսդրական հիմքի մշակումը,
- Ապահովել դատավորների պաշտոնին և պատասխանատվությանը համապատասխանող պատշաճ վարձատրություն: Այդ նպատակով նախաձեռնել արդյունավետ քննարկումներ դատական համակարգի ներկայացուցիչների, այդ թվում՝ դատավորների հետ,
- Դիտարկել դատավորների վարձատրության հարցը կարգավորող առանձին օրենսդրական ակտի ընդունման հնարավորությունը՝ ապահովելով վարձատրության չափի սահմանման և պարբերական վերանայման համար անհրաժեշտ ճկունություն,
- Բյուջեի կատարման արդյունավետությունը գնահատելու համար սահմանել հստակ ցուցիչներ՝ գնահատելու համակարգի կարիքները և աշխատանքի արդյունքները, որոնք հաշվի կառնվեն հաջորդ բյուջետային հայտերը կազմելիս,
- Ապահովել բարեփոխումների ծրագրերի և բյուջետային պլանավորման ժամանակացույցի համահունչ լինելը:

### ԲԴԽ՝

- Նոր հայտ կազմելիս հաշվի առնել իրավական հիմքերի անհրաժեշտությունը և Կառավարության հետ քննարկումների ժամանակ ստանալ երաշխիքներ, այդ թվում՝ ժամանակացույց, նշված հիմքերի մշակման և ընդունման առումով,
- Իրականացնել քննարկումներ դատավորների վարձատրության արդարացի մեխանիզմի մշակման հարցով,
- Ապահովել հանրային քննարկումներ դատական բյուջեի մասով:

### ԱԺ՝

- Ապահովել բավարար բյուջե՝ դատական իշխանության կողմից բացահայտված և առաջնահերթ համարվող կարիքները հոգալու համար՝ առաջնահերթություն տալով դատական իշխանության բյուջետային հայտին,

- Բյուջեի հաստատումից և կատարողականի քննարկումից առաջ կազմակերպել հանրային լսումներ՝ քննարկելու դատական համակարգի կարիքները և դրանց ֆինանսավորման անհրաժեշտությունը: